

ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ  
ԱԿԱԴԵՄԻԿՈՍ Ս.ԱՎԴԱԼԲԵԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ  
ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

**ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ՅՈՂԻ ԱՆԲԱՎԱՐԱՐՈՒԹՅԱՄԲ  
ՊԱՅՄԱՆԱՎՈՐՎԱԾ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ (ՅԱԽ)  
ՎԵՐԱՑՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՏԱՐԲԵՐ  
ԲԱՂԱԴՐԻՉՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ  
ԿԱՐԳԱՎԻՃԱԿԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

*ՅԱԽ վերացման և աղի համընդհանուր յոդացման  
ուղղությամբ առաջընթացի շրջահայտում*

ԵՐԵՎԱՆ

2019

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Ասլանյան Հրայր, Բ.Գ.Թ.

Ա 742 Հայաստանում յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների (ՅԱԽ) վերացման ազգային ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման կարգավիճակի գնահատման վերաբերյալ տեխնիկական հաշվետվություն/ Հրայր Ասլանյան.- Եր.: ՀՀ ԱՆ «Ակադեմիկոս Ս. Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ» ՓԲԸ, 2019. - 43 էջ:

«Հայաստանում յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների (ՅԱԽ) վերացման ազգային ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման կարգավիճակի գնահատման վերաբերյալ տեխնիկական հաշվետվությունը» թարգմանվել է անգլերեն բնագրից, որը հրապարակվել է ՀՀ առողջապահության նախարարության ակադեմիկոս Ս.Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտի կայքում, 2018 թվականին (հայերեն թարգմանությունը կատարվել է բնագրի հեղինակ Բ.Գ.Թ. Հրայր Ասլանյանի կողմից): Տեխնիկական հաշվետվությունը ներկայացնում է Հայաստանում յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների (ՅԱԽ) կանխարգելման ծրագրի և կերակրի աղի համընդհանուր յոդացման (ԱՀՅ) ռազմավարության իրականացման առաջընթացը: Նկարագրական մասը ներառում է ԱՀՅ վերաբերյալ ընդունված օրենսդրական կարգավորումները, կերակրի աղի յոդացման գործընթացն ու հիմնական արդյունքները, երկրում յոդացված աղի արտադրության, մատակարարման, մանրածախ վաճառքի և սպառման տվյալները, բնակչության յոդային սնուցման կարգավիճակը և ՅԱԽ տարածվածության ցուցանիշները, ինչպես նաև քարոզչական աշխատանքի վիճակը: Հետազոտական մասում ներկայացվում է պատրաստի սնունդ արտադրողների փոքր ընտրանքում յոդացված կերակրի աղի կիրառման պրակտիկայի և յոդային սնուցման վերաբերյալ այդ մթերքները պատրաստող անձանց գիտելիքների մակարդակի գնահատման արդյունքները: Չեկույցում արված եզրակացություններն ու առաջարկությունները կարող են նպաստել ազգային ծրագրի ձեռքբերումների կայունացմանը: Քանի, որ բնագրի հրապարակումից անցել է երկու տարի, հաշվետվության հայերեն տարբերակի որոշ հավելվածներում ներկայացվել են նաև 2017-2018 թթ. համար առկա տվյալները:

## Հապավումներ

ԱԱԻ	Առողջապահության ազգային ինստիտուտ
ԱԱԿ	Ավանի աղի կոմբինատ (Հայաստան)
ԱԱՊ	Առողջության առաջնային պահպանում
ԱՀԿ	Առողջապահության համաշխարհային կազմակերպություն
ԱՀՅ	Աղի համընդհանուր յոդացում
Ա/Ձ	Անհատ ձեռնարկատեր
ԱՆ	Առողջապահության նախարարություն
ԱՊՀ	Անկախ Պետությունների Համագործակցություն
ԱՌԼ	Ազգային ռեֆերենս լաբորատորիա (ՀՎԿԱԿ-ի կազմում)
ԱՏՎԿ	Առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոն (ԱԱԻ –ի կազմում)
ԲԱԽ	Բազմամասնագիտական աշխատանքային խումբ
ԲԸ	Բաժնետիրական ընկերություն (փակ՝ ՓԲԸ, բաց՝ ԲԲԸ)
ԺԱՀՀ	Ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտություն
ԻԿՀ	Իրազեկում, կրթում և հաղորդակցում (IEC)
ԿԳՆ	Կրթության և գիտության նախարարություն
ԿԱԵ	Կենտրոնական և Արևելյան Եվրոպա
ՀՀ	Հայաստանի Հանրապետություն
ՀՎԿԱԿ	Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոն
ՀԿ	Հասարակական, ոչ-կառավարական կազմակերպություն (անգլ. NGO)
ՅԱԽ	Յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումներ
ՅԱԽ/ՎՄԽ	Յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների վերահսկման միջազգային խորհուրդը (ICCIDD)
ՅԳՑ	Յոդի գլոբալ ցանց (անգլ. Iodine Global Network, հապավումը՝ IGN)
ՄՅԽ	Մեզում յոդի խտություն (կամ ՄՅ՝ մեզում յոդի մակարդակ)
Յունիսեֆ	ՄԱԿ-ի մանկական հիմնադրամ
ՈԱ	Որակի ապահովում
ՍԱՏՍ	ՀՀ ԿԵ Սննդի անվտանգության տեսչական մարմին

Տեխնիկական հաշվետվություն Հայաստանում յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների (ՅԱԽ) վերացման ազգային ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման կարգավիճակի գնահատման վերաբերյալ

*(ՅԱԽ վերացման և աղի համընդհանուր յոդացման ուղղությամբ առաջընթացի շրջահայում)*

## 1. Ընդհանուր տեղեկություններ

1950-ականներին, Հայաստանի Հանրապետությունը գտնվում էր նախկին ԽՍՀՄ այն տարածաշրջանների թվում, որտեղ առկա էր յոդի բավականին լուրջ անբավարարություն և գրանցվում էին խափափ համեմատաբար բարձր ցուցանիշներ: Հանրային առողջապահության այս լուրջ հիմնախնդիրը լուծելու համար Հայաստանի կառավարությունը նախաձեռնեց էնդեմիկ տարածքների բնակչությանը յոդացված սեղանի աղի մատակարարման ծրագիր: 1970 թվականից, երկրի և տարածաշրջանի միակ աղ արտադրող ձեռնարկությունը՝ Ավանի աղի կոմբինատը (ԱԱԿ) սկսեց արտադրել աղաջրի վակուում գոլորշացման եղանակով ստացված “Էքստրա” տեսակի յոդացված բարձրորակ կերակրի աղ (տեղական մատակարարման և արտահանման համար),  $23 \pm 13.5$  յոդ 1 կգ աղին խտությամբ (այդ ժամանակվա ԽՍՀՄ ստանդարտը), յոդացման համար օգտագործելով կալիումի յոդիդ:

Հայաստանում, 1990-ական թվականների սոցիալ-տնտեսական անկման հետևանքով, կերակրի աղի յոդացումը գրեթե ընդհատվեց: Այդ տարիներին բնակչությունը սպառում էր Իրանից և Ուկրաինայից ներկրվող չյոդացված աղ: 1995 թվականին կատարված հետազոտության ընթացքում հղի կանանց 50,4%-ի և 6-12 տարեկան երեխաների 40%-ի մոտ հայտնաբերվեց էնդեմիկ խափա: ՀՀ կառավարության խնդրանքով (1995թ.), Յունիսեֆ-ն օգնեց արդիականացնել ԱԱԿ արտադրական հոսքագիծը և ամրապնդել գործարանում լաբորատոր հետազոտությունների վրա հիմնված որակի ապահովման կարողությունները: 1997-ին, առողջապահության նախարարության կազմում ստեղծվեց Խափափ վերահսկման բաժին՝ վահանաձև գեղձի չափերի և ՄՅ մակարդակի գնահատում իրականացնելու համար; յոդացման ստանդարտը վերանայվեց՝ նորմը բարձրացվեց մինչև  $35 \pm 10$  մգ յոդ/կգ աղին, որպես կալիում յոդատ (յոդացումը մնաց կամավոր): Ընդամենը մեկ տարի անց ստացվեցին բավականին դրական արդյունքներ՝ արտաքին տեխնիկական աջակցության շնորհիվ յոդային սնուցման վերաբերյալ իրականացված ազգային հետազոտությունը (1998թ.) ցույց տվեց, որ տնային տնտեսությունների 73%-ն օգտագործում է յոդացված աղ և ՄՅ մակարդակը մինչև 5 տարեկան երեխաների 68%-ի

մոտ 100  $\mu\text{g/L}$ -ից բարձր է: Միևնույն ժամանակ պարզվեց, որ դեռևս տարբեր աստիճանի էնդեմիկ խափաչ է հայտնաբերվում վերարտադրողական տարիքի կանանց 30%-ի մոտ (6%-ը՝ տեսնելի չափերի), իսկ յոդային անբավարարությամբ պայմանավորված խանգարումների տարածվածությունը մինչև 5 տարեկան երեխաների շրջանում կազմում է 31%:

ՀՀ ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտությունը (2000թ.) ցույց տվեց, որ տեղի է ունենում յոդացված աղ սպառող տնային տնտեսությունների մասնաբաժնի հետագա աճ (աղի նմուշների 83,6%-ում՝ յոդը  $> 15$  մգ/կգ); այնուամենայնիվ, աղի նմուշների 6,8%-ում յոդի մակարդակը 15 մգ/կգ-ից ցածր է; երկրի մի շարք շրջաններում աղի նմուշների 24-27%-ում ընդհանրապես յոդ չի պարունակում: Այս տվյալների հիման վրա, ՀՀ ԱՆ-ն առաջարկեց (2001թ.) և պետատանդարտի վարչությունը հաստատեց կերակրի աղի յոդացման ավելի բարձր ստանդարտ՝  $50 \pm 10$  մգ յոդ/կգ աղում:

2004 թվականին, ՀՀ կառավարությունն ընդունեց ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագիր, ինչպես նաև առաջնահերթ (2004-2007թ.թ.) միջոցառումների իրականացման ժամանակացույց: Աղի համընդհանուր յոդացումը (ԱՀՅ) Հայաստանում դարձավ պարտադիր, իսկ չյոդացված աղի ներկրումն արգելվեց: Մեկ տարի անց, Յունիսեֆի աջակցությամբ ձեռնարկված “Յոդային սնուցման և ԱՀՅ ծրագրի իրականացման վերաբերյալ ազգային ներկայացուցչական հետազոտությունը” ցույց տվեց, որ տնային տնտեսություններից վերցրած կերակրի աղի նմուշների 97.2%-ը պարունակում է ավելի քան 15 մգ/կգ յոդ և 8-10 տարեկան երեխաների մեզում յոդի պարունակության մեդիանան երկրի մասշտաբով (ՄՅ մակարդակը) կազմում է 313 մգ/Լ, փոքր ինչ գերազանցելով ԱՀԿ-ի սահմանած օպտիմալ դիապազոնի (100-300 մգ/Լ) վերին սահմանը: Այս արդյունքների հիման վրա, Հայաստանին առաջարկվեց հաստատված ազգային ստանդարտը իջեցնել ԱՊՀ երկրների համար համաձայնեցված նորմի մակարդակին՝  $40 \pm 15$  մգ յոդ / կգ աղում:

Ընդհանուր առմամբ, վերը նշված ուսումնասիրությունը հաստատեց, որ կերակրի աղի համընդհանուր յոդացման արդյունավետ ծրագրի շնորհիվ Հայաստանին հաջողվել է վերացրել յոդի անբավարարությունը երկրի բնակչության շրջանում: Փորձագետները եկան եզրակացության, որ ԱԱԿ-ը, հետևողականորեն յոդացնելով իր արտադրած կերակրի աղը, հանդիսանում է ԱՀՅ ռազմավարության ջատագովն ու աջակիցը: Սննդի արդյունաբերությունն ակնհայտորեն ունի զգալի ներդրում յոդի սպառման մեջ՝ պատրաստի սննդամթերքում յոդացված աղ օգտագործելու շնորհիվ (սակայն, համապատասխան հրապարակումներ չկան): 2006թ. հուլիսին “Յոդի անբավարարության կայուն էլիմինացիայի ցանցի” կողմից (Յոդի Ցանց, ՅԱԽ/ՎՄԽ կամ

ICC/IDD, Յունիսեֆ և ԱՀԿ) Հայաստանը միջազգայնորեն ճանաչվեց որպես յոդի անբավարարությունը հաջողությամբ հաղթահարած երկիր (շնորհիվեց վկայական):

Հետագա տարիները նշանավորվեցին առողջապահության և գյուղատնտեսության ոլորտներում բավականին արմատական բարեփոխումներով: Դրանցից մի քանիսը զգալի հետևանքներ ունեցան Հայաստանում ՅԱԽ վերացման ազգային ծրագրի կայուն իրականացման համար: Մննդամթերքի մոնիթորինգի / վերահսկողության և ստանդարտների ընդունման գործառույթը վստահիվեց ՀՀ գյուղատնտեսության նախարարության Մննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը (ՄԱՊԾ՝ այժմ ՍՍՏՍ) (նպաստելով սննդի և սնուցման հետ կապված առողջության պաշտպանության և առողջության ամրապնդման աշխատանքների վատ ինտեգրմանը): ՀՀ կառավարության 2004թ. 353-Ն որոշմամբ հաստատված ժամանակացույցի առաջնահերթ գործողությունների պլանը հետագայում չթարմացվեց:

ՄԱՊԾ պարագայում, ռիսկերի որոշման սկզբունքի վրա հիմնված աուդիտի պլանները չէին նախատեսում կերակրի աղում յոդի պարունակության մոնիթորինգ, իսկ ՀՀ ԱՆ-ն շարունակեց կատարել (2009-2016թ.թ.) անալիզներ միայն սեղանի աղի նմուշներում՝ բացառապես տնային տնտեսությունների մակարդակում: Այդպիսով, երկրում ներդրված ԱՀՅ ռազմավարությունից դուրս մնաց մի շատ կարևոր բաղադրիչ՝ աղի մոնիթորինգը մանրածախ առևտրի մակարդակում և արտադրված պատրաստի սննդամթերքում: Այնուհետև, նախկին պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (2013 թ.) բաժանումը երկու նոր կառույցների ստեղծեց էլ ավելի անորոշ վիճակ ծրագրի վերահսկման գործընթացում շահագրգիռ կողմերի դերերի և պարտականությունների վերաբերյալ:

ՅԱԽ վերացման ազգային ծրագրի համար կարևոր հանգրվան դարձավ Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Յունիսեֆ-ի և ՅԳՑ-ի կազմակերպած “ԱՀՅ կայունության ապահովման ենթատարածաշրջանային խորհրդակցությունը” (24–25 սեպտեմբերի, 2015թ. Ալմաթի, Ղազախստան), որը շրջահայեց երկրների առաջընթացը և յուրաքանչյուր երկրի համար առաջարկեց պլաններ (ճանապարհային քարտեզներ), նպատակ ունենալով ապահովել ՅԱԽ էլիմինացիայի կայուն իրավիճակ: Հայաստանի համար մշակված ճանապարհային քարտեզը ընգրկում էր հետևյալը. **ա)** միջոլորտային հանձնաժողովի ստեղծում, նպատակ ունենալով ապահովել համագործակցություն պետական կառավարման մարմինների (ոլորտների) և այլ շահագրգիռ կողմերի միջև՝ գործողությունների համակարգման և տեղեկատվության ու հաշվետվությունների փոխանակման համար; **բ)** գործողությունների մոնիթորինգ և յոդային սնուցման վրա դրանց ազդեցության գնահատում (ՄՅ մակարդակի գնահատում); **գ)** երկրում ՅԱԽ տարածվածության կանոնավոր ներկայացուցչական հետազոտությունների պլանավորում և

իրականացում; **դ)** բնակչության և բուժաշխատողների շրջանում ԻԿՀ աշխատանքի բարելավում՝ ԱՀՅ ռազմավարության միջոցով ՅԱԽ վերացման կարևորության վերաբերյալ (որակյալ յոդացված աղ սպառելու համար):

Առաջնորդվելով վերը նշված «ճանապարհային քարտեզով», դեռևս 2016 թվականին իրականացվել է երկու կարևոր քայլ, նպատակ ունենալով՝

1/ ամրապնդել մոնիթորինգի կանոնակարգային շրջանակները, որպեսզի դրանցում ներառվի մարդու սպառման համար նախատեսված ողջ աղը (ոչ միայն սեղանի աղ), և 2/ նախաձեռնել բնակչության մակարդակով ներկայացուցչական հետազոտություն ՄՅԽ վերաբերյալ (բիոմոնիթորինգ), այն է, նորից գնահատել (2005 թվականից 12 տարի անց) բնակչության յոդային սնուցման կարգավիճակը և ՅԱԽ էլիմինացիայի առաջընթացը (առաջինը, ՀՀ ԱՆ-ն, համագործակցելով ՀՀ գյուղատնտեսության նախարարության հետ; երկրորդը, ԵՊԲՀ-ն, համագործակցելով արտաքին գործընկերների՝ ՅԳՑ-ի, ԱՄՆ Կոլումբիայի համալսարանի հետ):

Այս նախագծի նպատակն է շրջահայել ՅԱԽ վերացման ազգային ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման կարգավիճակը՝ ձեռքբերումներն ու կարիքները, ինչպես նաև մշակել առաջարկություններ Հայաստանում ԱՀՅ ռազմավարության կայուն իրականացման համար (ապահովել յոդի անբավարարության էլիմինացիայի կայունությունն ապագա սերունդների համար): Նախագծի հիմնական խնդիրները և գործողությունները ներկայացված են ստորև՝

- **Հայաստանում ՅԱԽ էլիմինացիայի (վերացման) ազգային ծրագրի իրականացման կայունությունն ամրապնդելու նպատակով, շրջահայել/վերանայել ընթացիկ իրավակարգավորման շրջանակները, պատրաստել առաջարկությունների նախագիծ՝ ծրագրային շրջանակների լրամշակման, այդ թվում բազմաոլորտ համակարգման մեխանիզմի ձևավորման համար (բազմամասնագիտական աշխատանքային խումբ կամ հանձնաժողով):**
- **Մշակել “Տեխնիկական առաջադրանք” երկրում կերակրի աղի յոդացման ծրագրի մշտադիտարկման վերաբերյալ՝ (հստակեցնելով շահագրգիռ կողմերի դերերն ու պարտականությունները), ներառյալ առաջարկություններ տվյալների կանոնավոր հավաքման, արդյունքների վերլուծության, պարբերական հաշվետվությունների տրամադրման և համատեղ որոշումների կայացման համար, ինչպես նաև ՀՎԿԱԿ-ի նորաստեղծ Ազգային ռեֆերենս լաբորատորիայում յոդային սնուցման բիոմոնիթորինգի հնարավորություններն ընդլայնելու համար:**
- **Հավաքել/ամփոփել տեղեկատվություն երկրում արտադրվող և երկիր ներկրվող կերակրի աղի վերաբերյալ, պարզաբանել չյոդացված աղի ներկրման սողանցքները (ինչպես նաև կատարել 3 սուպերմարկետների և 20 մթերային փոքր խանութների**

անկետա-հարցումային հետազոտություն և տալ փորձագիտական գնահատական յոդացված ու չյոդացված աղի համամասնության վերաբերյալ);

- **Շրջահայել վահանաձև գեղձի խանգարումների տարածվածությունը (պաշտոնական առողջապահական վիճակագրությունից)**, լրացնել Հայաստանում ՅԱԽ դինամիկան 2015-2016 թվականների տվյալներով; անցկացնել հարցազրույց ՀՀ ԱՆ Առողջապահության տեղեկատվական վերլուծական կենտրոնի (ԱՏՎԿ) աշխատակազմի հետ՝ խալիպի տարածվածության ներկայացուցչական հետազոտություն նախաձեռնելու նպատակով առաջարկություններ մշակելու համար (ինչպես նաև բուժհաստատությունների մակարդակում ՅԱԽ հաշվետվության ձևերի բարելավման կարիքները որոշելու համար):
- **Հավաքել/ամփոփել տեղեկատվություն բուժաշխատողների և ընդհանուր առմամբ, բնակչության համար գոյություն ունեցող ԻԿՀ նյութերի վերաբերյալ**, որոշել կարիքները և մշակել առաջարկություններ ՀՀ առողջապահության նախարարությանը՝ խնդրո առարկա բնագավառում համակարգված աշխատանք իրականացնելու համար (ինչպես նաև մշակել հուշաթերթիկ՝ ՅԱԽ վերաբերյալ գիտելիքների մակարդակի բարձրացման և յոդացված աղ սպառելու համար, հատկապես անդրադառնալով բոլոր այն թյուրընկալումներին, որոնք նպաստում են չյոդացված կերակրի աղի պահանջարկի ձևավորմանը):

Աշխատանքն իրականացվել է ՅԳՑ (IGN) Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի տարածաշրջանային համակարգող, պրոֆեսոր Գրիգորի Գերասիմովի տեխնիկական և ֆինանսական աջակցությամբ: Նախագծի ակնկալվող արդյունքները և ժամկետները ներկայացված են Հավելված 1-ում:

## 2. Հայաստանում ՅԱԽ վերացման ազգային ծրագրի<sup>2</sup> կայուն իրականացման իրավա-կանոնակարգային շրջանակները

Հայաստանում ՅԱԽ վերացման ծրագրի և ԱՀՅ իրականացման նպատակով ստեղծված իրավա-կանոնակարգային փաստաթղթերի շրջահայումը թույլ տվեց պարզել հետևյալ հիմնական հարցերը՝

- Հայաստանում, յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների (ՅԱԽ) վերացման ազգային ծրագրի մշակման/իրականացման, ներառյալ ԱՀՅ ներդրման ընդհանուր իրավական հիմքերն ապահովված են «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» ՀՀ օրենքի (ՀՆ-0732-Ի; 16.11.1992թ.) և «Անկախ պետությունների համագործակցության

---

<sup>2</sup> Ի սկզբանե ծրագիրը պաշտոնապես կոչվել է «ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագիր» (31.12.2000թ., որոշում N 902):



մասնակից պետությունների բնակչության շրջանում յոդի սդոլայան վիճակների կանխարգելման վերաբերյալ» ԱՊՀ երկրների կողմից ստորագրված (Մինսկ, 31.05.2001թ.) և ՀՀ Նախագահի կողմից վավերացված (Երևան, 13.03.2002թ.) միջպետական համաձայնագրի հիմնադրույթներով:

- ԱՊՀ երկրների վերոնշյալ միջկառավարական համաձայնագրով սահմանված յոդացման ընդհանուր ստանդարտը ( $40 \pm 15$  մգ յոդ/կգ աղին), առևտրի խթանման և աղի պատշաճ որակի ապահովման նպատակով համագործակցության հաստատումն ունեցավ վճռորոշ նշանակություն Հայաստանում ԱՀՅ ռազմավարության ներդրման համար: Երկրի համապատասխան նորմատիվային փաստաթուղթն ընդունվեց 2004 թվականի փետրվարի 12-ին՝ կառավարությունը հաստատեց «ՀՀ բնակչության սննդում յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագիրը, առաջնահերթ (2004-2007թ.թ.) միջոցառումների իրականացման ժամանակացույցը հաստատելու և 2000 թվականի դեկտեմբերի 31-ի թիվ 902 որոշման մեջ լրացում կատարելու մասին» No 353-Ն նորմատիվային որոշումը: Աղի համընդհանուր յոդացումը Հայաստանում դարձավ պարտադիր (թեև 2001 թվականին ընդունված  $50 \pm 10$  մգ/կգ կամավոր յոդացման ստանդարտը վերահաստատվեց); չյոդացված աղի արտադրությունը և ներկրումը, ինչպես նաև պատրաստի սննդամթերքների արդադրության մեջ չյոդացված աղի կիրառումն արգելվեց, բացառությամբ այն դեպքերի, երբ յոդացված կերակրի աղի օգտագործումը չի թույլատրվում արտադրության տեխնոլոգիայով (վերջինս կարող է հանդիսանալ սողանցք չյոդացված աղի վաճառքը խանութներում և կիրառումը պատրաստի սննդի արտադրության մեջ թույլատրելու համար):
- Հաստատված ծրագիրը ներառում է հետևյալ ութ ռազմավարությունները՝  
ՅԱԽ կանխարգելման նորմատիվային դաշտի կատարելագործում (այդ թվում, յոդացման, փաթեթավորման, մակնշման և այլ պայմաններին ներկայացվող պահանջները սահմանող տեխնիկական կանոնակարգի մշակում); բնակչության սննդում բացառապես յոդացված կերակրի աղի օգտագործման ապահովում (չյոդացված աղի ներմուծման, մանրածախ վաճառքի և սննդարդյունաբերության մեջ կիրառման արգելում); ՅԱԽ հայտնաբերում, ախտորոշում և բուժում; կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգ; ՅԱԽ վերահսկման և կանխարգելման հարցերի վերաբերյալ մասնագետների վերապատրաստում; յոդով հարուստ սննդամթերքի արտադրության խրախուսում (ներառյալ, կենդանիների կերերի մեջ յոդացված աղի օգտագործման հնարավորության գնահատում); քարոզչություն և տեղեկատվության տարածում; ՅԱԽ վերահսկման և կանխարգելման ծրագրի արդյունավետության գնահատում:
- Հաջորդ կանոնակարգի մշակումը հետևեց Յունիսեֆի աջակցությամբ 2005 թվականին իրականացված «Հայաստանում յոդային սնուցման և աղի համընդհանուր յոդացման /ԱՀՅ/ ծրագրի իրականացման վերաբերյալ ազգային

ներկայացուցչական հետազոտությանը”: Այս հետազոտության արդյունքները ցույց տվեցին, որ տնային տնտեսություններից վերցված աղի նմուշների 97.2%-ում յոդի քանակը կազմում է ավելի քան 15 մգ/կգ, իսկ ՄՅ մակարդակի ազգային մեդիանան 8-10 տարեկան երեխաների շրջանում՝ 313 մկգ/Լ: Վերջինս գերազանցում է ԱՀԿ առաջարկությամբ ընդունված ՄՅ նորմի (100-300 մկգ/Լ) վերին սահմանը, ուստի Հայաստանին առաջարկվեց աղի յոդացման ազգային ստանդարտը ( $50 \pm 10$  մգ/կգ) իջեցնել ԱՊՀ երկրների ընդունած  $40 \pm 15$  մգ/կգ ստանդարտի մակարդակին (ընդգծվեց նաև վերահսկողության շարունակման անհրաժեշտությունը): 2006 թվականի դեկտեմբերի 21-ին ՀՀ կառավարությունն ընդունեց թիվ 1863-Ն որոշումը՝ «ՀՀ կառավարության 2004 թվականի փետրվարի 12-ի թիվ 353-Ն որոշման մեջ փոփոխություն մտցնելու մասին», առաջարկելով 353-Ն որոշման «2ա» ենթակետում նշված « $50 \pm 10$ » թվերը փոխարինել « $40 \pm 15$ » թվերով (մտնելով ուժի մեջ 2007 թվականի հուլիսի 1-ից): Սակայն, 2004–2007թ.թ. առաջնահերթ գործողությունների ժամանակացույցը հետագայում չթարմացվեց, առողջապահության նախարարությունը չունեցավ ղեկավար դերակատարություն այս բազմաուղորտային նախաձեռնության համապատասխան գործողությունները ՍԱՊԾ-ին հանձնելու հարցում:

- ՅԱԽ վերացման ազգային ծրագրի հետագա տարիների (2012-2014թ.թ.) մշտադիտարկման և քարոզչության միջոցառումները շարադրված են «Հայաստանի Հանրապետության պարենային անվանգության ապահովման հայեցակարգից բխող միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի թիվ 1522-Ն որոշմամբ հաստատված գործողությունների պլանում (կետեր 9.2 և 9.3):
- ՀՀ կառավարության 2014 թվականի սեպտեմբերի 25-ի նիստում ընդունվեց «Երեխաների սնուցման բարելավման հայեցակարգին և հայեցակարգի իրականացման 2015-2020թ.թ. գործողությունների ծրագրին հավանություն տալու մասին» N 40 արձանագրային որոշումը: Առողջության և սնուցման բազմաթիվ մարտահրավերների հետ միասին, հայեցակարգի փաստաթղթում տեղ գտան նաև ՅԱԽ էլիմինացիայի ռազմավարության և ԱՀՅ ծրագրի իրականացման խնդիրները, այդ թվում՝ յոդի անբավարարության դեմ պայքարի ծրագրի շրջանակներում ձեռք բերված հաջողության կայունության ապահովման դժվարությունները և բիոմոնիթորինգի համակարգի բացակայությունը (կետ 65.3); երեխաների առողջության ու սնուցման բարելավման ծրագրերի իրականացման գործընթացում միջգերատեսչական և միջազգային համագործակցության բարելավման անհրաժեշտությունը (կետ 69): Նշվում է, որ երեխաների յոդային սնուցման ռազմավարական նպատակն է «0-5 տարեկան երեխաներ ունեցող տնային տնտեսություններում համարժեք յոդացված աղի օգտագործման 95% և ավելի ցուցանիշի շարունակական ապահովումը» (72.1. ժա): Գործողությունների ծրագիրը

նախատեսում է ՅԱԽ վերահսկման միջոցառումների շարունակական իրականացում 2015-2020 թվականներին (կետ 8), ներառյալ՝ կերակրի աղում յոդի պարունակության շարունակական մոնիթորինգ; ՄՅ մակարդակի հետազոտություն; յոդի անբավարարությամբ պայմանավորված վահանաձև գեղձի հիվանդությունների վիճակագրական հաշվետվության ձևերի մշակում; ՅԱԽ կանխարգելմանն ուղղված քարոզչություն; 2015-2017 թվականներին՝ ՅԱԽ կանխարգելմանն ուղեցույցի ներդրում:

- Ծրագրի իրավա-կարգավորման շրջանակներն ավելի ամրապնդվեցին Արևելյան Եվրոպայի և Կենտրոնական Ասիայի երկրների համար Յունիսեֆ-ի և ՅԳՑ-ի ացկացրած “ԱՀՅ կայունության ապահովման ենթատարածաշրջանային խորհրդակցության” արդյունքում (24–25 սեպտեմբերի, 2015թ. Ալմաթի, Ղազախստան): Խորհրդակցության ընթացքում քննարկվեց երկրների առաջընթացը և յուրաքանչյուր երկրի համար առաջարկվեցին պլաններ (ճանապարհային քարտեզներ), նպատակ ունենալով ապահովել ՅԱԽ էլիմինացիայի կայուն իրավիճակ (Հայաստանի պլանը տես վերևում, էջեր 5-6): Համաձայն ՀՀ Վարչապետի 2015թ. հոկտեմբերի 12-ի թիվ 02/14.7/17487-15 հանձնարարականի և ՀՀ ԱՆ 2015թ. դեկտեմբերի 23-ի թիվ 3688-Ա հրամանի, ստեղծվեց առողջապահության և գյուղատնտեսության գերատեսչություններից ներգրաված փորձագետների աշխատանքային խումբ, “Կերակրի աղում յոդի պարունակության պետական վերահսկողության, մշտադիտարկման և տեղեկատվության փոխանակման ու հանրայնացման” կարգ: Այս փաթեթային փաստաթուղթն, այնուհետև, հաստատվեց ՀՀ ԱՆ (թիվ 829-Ա, 23.03.2016թ.) և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների (թիվ 74-Ա, 18.03.2016թ.) համատեղ հրամանով: Վերջինս սահմանում է կերակրի աղում յոդի պարունակության մոնիթորինգի ընթացակարգերը՝ **a)** մանրածախ առևտրի համակարգում (երկրում արտադրված և ներկրված աղ) և սննդի արդյունաբերության և հասարակական սննդի կազմակերպություններում, որն իրականացնում է ՍԱՊԾ-ը՝ սննդի անվտանգության ոլորտում լիազոր մարմինը (նշանակված ՀՀ կառավարության 21.02.2013թ., No 218-Ն որոշմամբ); **b)** տնային տնտեսություններում, որն իրականացնում է ՀՎԿԱԿ-ը՝ համակցելով կերակրի աղի նմուշառումները վարակիչ հիվանդությունների օջախների հետազոտությունների հետ, **c)** կալիումի յոդատով հարստացված կերակրի աղում յոդի պարունակության որոշման մեթոդը; **d)** տվյալների փոխանակման և հանրային հաղորդակցության ապահովման կարգն ու ձևերը: Այդուհանդերձ, համատեղ հրամանում չի առաջարկվում համատեղ համակարգման մեխանիզմ (շահագրգիռ կողմերի, օրինակ ԱՆ, ՍԱՊԾ, արտադրողների և այլ գործընկերների ներգրավման համար); տվյալների շտեմարանի ձևավորում, տվյալների համատեղ վերլուծություն և միջոցառումների կազմակերպում, հաշվետվություն և տեղեկատվության տարածում (ընդհանուր

առմամբ, հիմնական շահագրգիռ կողմերի համաձայնեցված գործողությունները հեշտացնելու համար)

- Հայաստանում, 1997 թվականից ի վեր, աղի յոդացման միջոցով ՅԱԽ էլիմինացիան դիտարկվել է որպես առողջապահության ոլորտի միջամտություն: Մանրածախ առևտրում և տնային տնտեսություններում իրականացվող արտաքին մոնիթորինգը հիմնվել է ՀՀ ԱՆ 1997 թվականի հուլիսի 18-ի No 405 հրամանի վրա; ստեղծվել է Բազմամասնագիտական աշխատանքային խումբ (ԲԱԽ), որը նախագահել է առողջապահության փոխնախարարը, ապահովելով ծրագրի իրականացման վերահսկում: Նշանակվել է նաև ՅԱԽ վերացման ծրագրի ղեկավար (Մ.Բասիլիսյան, մինչև 2009թ. միջնահատվածը): ԲԱԽ և ծրագրի ղեկավարի արդյունավետ աշխատանքը նպաստել է ԱՀՅ ռազմավարության ներդրմանը (2004թ.) և, այնուհետև, ապահովել է նշանակալից հաջողություն Հայաստանում յոդի անբավարարության վերացման գործում (վավերացվել է 2006 թվականի հուլիսին): 2007 թվականից հետո, Մանրամթերքի անվտանգության մասին» ՀՀ օրենքի (2006 թ.) դրույթների հիման վրա, սննդամթերքի մոնիթորինգի և ստանդարտների վերահսկման լիազորությունները վերապահվել են ՀՀ գյուղատնտեսության նախարարության Սննդամթերքի անվտանգության պետական ծառայությանը (ՍԱՊԾ), որի աուդիտորական պլանները մինչև 2017 թ. աղի մեջ յոդի պարունակության մոնիթորինգ չեն նախատեսել):
- **Կառույցներ և մեխանիզմներ՝ միջոլորտային որոշումների կայացման և գործողությունների իրականացման համար:** Կարգավորող փաստաթղթերի վերլուծական ակնարկը հնարավորություն տվեց պարզել, որ ԱՀՅ ծրագրի չորրորդ բաղադրիչին՝ վերահսկողությանը պատշաճ ուշադրություն չի հատկացվում: Այն սովորաբար ուղղված է շահագրգիռ կողմերի համախմբմանը, նպատակ ունենալով համատեղ կառավարել ծրագրի առաջընթացը, քննարկել ընթացիկ տեղեկատվությունը, որոշումներ կայացնել խոչընդոտների վերաբերյալ և կանոնավոր հրապարակայնությամբ խթանել հաշվետվողականությունը (F. van der Haar, G. Gerasimov, et al., 2011): 2009 թվականից, երկու ծրագրային բաղադրիչները՝ տնային տնտեսություններում օգտագործվող կերակրի աղի մոնիթորինգը և ԱՀՅ ռազմավարության քարոզչությունը իրականացվել են ՀՀ ԱՆ Պետական հիգիենիկ և հակահամաճարակային տեսչության (ՊՀՀՏ) կողմից: 2013 թվականին, ՊՀՀՏ-ի վերակազմավորման միջոցով ձևավորվեցին՝ ՀՀ ԱՆ Առողջապահության պետական տեսչությունը (ԱՊՏ) և Հիվանդությունների վերահսկման և կանխարգելման ազգային կենտրոնը (ՀՎԿԱԿ): Ծրագրի ղեկավարի իրավահաջորդը նախկին ՊՀՀՏ-ից տեղափոխվեց ԱՊՏ, մինչդեռ ծրագրի իրականացման գործառույթը մնաց ՀՎԿԱԿ լիազորությունների շրջանակում: Բացի այդ, նորաստեղծ մարմինների համակարգումը վստահվեց առողջապահության նախարարի երկու տարբեր տեղակալների: Կառույցների գործառույթները հստակորեն չսահմանվեցին

(կանոնադրություններում տեղ գտան համընկնումներ); այս ամենը հանգեցրեց թույլ փոխազդեցության, ի թիվս այլոց, ՅԱԽ վերացման ազգային ծրագրի իրականացման գործում: Գերակա մեխանիզմ կամ համապարփակ պլան չմշակվեց, որը կհամակարգեր ծրագրի բաղադրիչների իրականացումը առողջապահության ոլորտում և նրա սահմաններից դուրս (օրինակ, ՍԱՊԾ ներգրավումով) և կապահովեր սերտ համագործակցություն ընդհանուր նպատակների շուրջ: Անգամ ՀՀ առողջապահության և գյուղատնտեսության նախարարությունների համատեղ հրամանի ընդունումից հետո (մարտ 2016թ., տես վերևում), յոդի անբավարության դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագրի վերահսկման Բազմամասնագիտական Աշխատանքային Խումբը չվերստեղծվեց, ծրագրի ղեկավար չնշանակվեց:

### **3. Աղի արտադրության և մատակարարման իրավիճակը Հայաստանում (մթերային խանութներում վաճառվող կերակրի աղի տեսականու գնահատման արդյունքները)**

Աղի արտադրության և մատակարարման իրավիճակի վերլուծությունը պարզել է հետևյալ հիմնական հարցերը՝

- Ավանի աղի կոմբինատը (ԱԱԿ) հանդիսանում է Հայաստանում միակ աղ արտադրող ձեռնարկությունը և այն հետևողականորեն մատակարարում է որակյալ յոդացված կերակրի աղի արտադրանք: Դեռևս 1998-1999 թվականներին, ԱԱԿ-ը տարեկան մատակարարում էր 12 000 տոննա լիովին յոդացված կերակրի աղ և այդ քանակությունը համարվում էր բավարար՝ ներքին սպառման կարիքները հոգալու համար (Ֆ.Հաար, Գ. Գերասիմով և ուրիշներ, 2011թ.):
- Հավելված 2-ում բերված աղյուսակից երևում է, որ Հայաստանում, 2013-2018 թ.թ. ժամանակահատվածում, ԱԱԿ-ի արտադրանքի տարեկան ընդհանուր ծավալը գտնվել է 27-32 հազար տոննայի միջակայքում, բացառությամբ վերջին տարվա, երբ ցուցանիշը զգալիորեն կրճատվել է (մոտ 30%-ով): ԱԱԿ-ը տարեկան արտադրել և մատակարարել է մինչև 15 000 տոննա որակյալ յոդացված կերակրի աղ, երկու տեսակի՝ “Էքստրա” մանր աղ և 2-րդ տեսակի խոշոր աղացվածքի (N 2) քարաղ, մոտավորապես 50 : 1 հարաբերությամբ: Աղաջրի վակուում գոլորշացման եղանակով ստացված և յոդացված “Էքստրա” աղը մատակարարվում է խանութներին և սննդամթերք արտադրող կազմակերպություններին՝
  - փաթեթավորված, 1 կգ քաշով աղյուսաձև պոլիպրոպիլենային փաթեթներով, և
  - պարկավորված, 25 կգ քաշով պոլիէթիլենային պարկերով;“Էքստրա” աղի մի մասը (2-7%), սկսած 2014 թվականից, “արտադրական կարիքների համար”, պարկավորվում և մատակարարվում է չյոդացված վիճակում (2014-2018թ.թ. ընթացքում ծավալը աճել է երեք անգամ):

2-րդ տեսակի խոշոր (N 2) յոդացված քարաղը վաճառվում է 0,9 կգ քաշով պոլիպրոպիլենային փաթեթներով; այս ապրանքատեսակի ծավալները 300 տոննայից (2013թ.) տարեց-տարի աստիճանաբար նվազել են, կազմելով 2018 թվականին մոտ 200 տոննա; 2-րդ տեսակի խոշոր քարաղը նույնպես ունի չյոդացված այսպես կոչված “արտադրական կարիքների համար” տարբերակ, որը սկսել է արտադրվել 2016 թվականից (76 տոննա) և ունեցել է աճի միտում (հասնելով 125 տոննայի):

- Ջուգահեռաբար, կոմբինատն արտադրում է շուրջ 5-6 հազար տոննա կերային քարաղ (2018-ին ավելի քիչ)՝ հիմնականում գյուղատնտեսական կենդանիների համար: Կերային քարաղի արտադրանքի մեծ մասը բաղկացած է 5-10 կիլոգրամանոց բեկորներից; վերջինս կոչվում է “ընտրովի քարաղ”; որի մոտավորապես ¼-ը, լրացուցիչ ընտրությունից հետո (սպիտակ կտորները), ձեռք են բերում փոքրամասշտաբ անհատ արտադրողները (մոտավորապես 10 արտադրամասեր), ովքեր այս ապրանքատեսակն աղում ու փաթեթավորում են որպես խոշոր աղացվածքի չյոդացված կերակրի աղ և մատակարարում են այն մթերային խանութներին (մինչև 20%-ը) և, ուղղակիորեն, պատրաստի սննդամթերք արտադրող ձեռնարկություններին (մինչև 80%-ը):
- Ինչպես մյուս պարենային ապրանքները, այնպես էլ աղը շուկայական տնտեսության (ազատ առևտրի) ապրանք է, և տեղական մատակարարը (ԱԱԿ) ստիպված է մրցել օտար աղբյուրներից ներմուծվող աղի դեմ: Համաձայն ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարությունից <sup>3</sup> ստացված տվյալների, 2013-2017 թվականներին, Հայաստանի Հանրապետություն տարեկան ներկրվել է 2-3 հազար տոննա յոդացված կերակրի աղի (Հավելված 2), կազմելով երկրում վաճառվող/օգտագործվող ամբողջ յոդացված աղի մոտավորապես 1/6 մասը կամ 11-17%-ը: 2018-ին, ներկրման ծավալում արձանագրվել է զգալի աճ (4433 տոննա կամ ամբողջի 25,5%-ը); արտաքին աղբյուրից ստացվող յոդացված աղի ծավալի շեշտակի աճը, ամենայն հավանականությամբ, պատճառ է դարձել ԱԱԿ-ի համանման արտադրանքի ծավալի կրճատման համար: Վերջին տարում, ներկրված կերակրի աղի առավելագույն մասը (94%-ը) եղել է 3 երկրներից՝ Ուկրաինայից (48%), Իրանի Իսլամական Հանրապետությունից (41%) և Ռուսաստանի Դաշնությունից (5%): Փոքր քանակներով, 20-50 տոննա, կերակրի աղ է ներկրվել Բելգիայից, Ավստրիայից ու ևս 10 երկրներից (չյոդացված կամ թույլ յոդացված՝ “ալպիական”, ֆտորացված և այլն): Հայաստանից աղի տարբեր ապրանքատեսակների արտահանման ծավալը նույնպես փոքր է, առավելագույնը՝ 2016 թվականին մոտ 200 տոննա (մոտավորապես 25%-ը յոդացված):

---

<sup>3</sup> Նշված նախարարությունը վերակառուցվել է և 2019 թվականի հունիսի 1-ից վերանվանվել է ՀՀ էկոնոմիկայի նախարարություն, իր մեջ ներառելով ՀՀ գյուղատնտեսության նախարարությունը:

- Հայաստանում արտադրված և արտաքին աղբյուրներից Հայաստան ներկրված յոդացված և չյոդացված կերակրի աղի հաշվարկային ընդհանուր ծավալը կազմում է տարեկան մոտավորապես 19 000 տոննա կամ 6,33 կգ, ըստ մարդաշնչի: Այս ընդհանուր քանակից յոդացված կերակրի աղի քանակը կազմում է 17 500 տոննա (6 տարվա միջինը), կամ 5,8 կգ, ըստ մարդաշնչի (ամբողջ կերակրի աղի 92%-ը): ԱԱԿ-ը երկրի աղի շուկայում գերիշխող դիրք է զբաղեցնում; կոմբինատի արտադրած կերակրի աղի մեծ մասը յոդացված է (13-14 հազար տոննա); այս քանակն ակնհայտորեն բավարար է երկրի մասշտաբով ողջ բնակչության շրջանում յոդացված կերակրի աղի կարիքները հոգալու համար: Միևնույն ժամանակ, վերջին տարիներին ԱԱԿ-ը սկսել է արտադրել, թեև առայժմ շատ փոքր քանակներով, նաև չյոդացված աղ: Բացի այդ, կոմբինատի արտադրանքի մի փոքր մասը (մոտ 8%-ը) որպես “ընտրովի” քարաղի բեկորներ մատակարարվում է աղացման և փաթեթավորման արտադրամասերի և նրանց միջոցով կարող է հայտնվել շուկայում, իսկ այստեղից՝ հասնել տնային տնտեսություններ և սնունդ արտադրողներին:
- **Մանրածախ առևտրի մակարդակում** աղի մատակարարումն ուսումնասիրվել է Երևան քաղաքի, Արմավիր և Կոտայք մարզերի բնակավայրերի (քաղաքների և գյուղերի) 32 մթերային խանութներում՝ սուպերմարկետներում, սովորական խանութներում և ա/ձ վաճառակետերում; դիտարկվել է կերակրի աղի տարբեր տեսակների (2-7) առկայությունը դարակներում; ընտրանքը կազմել է աղի ընդամենը 93 նմուշ (Հավելված 3): Աղի աղբյուրների և տեսակների համեմատական վերլուծությունը ցույց է տվել, որ դիտարկված 93 նմուշներից 61-ը յոդացված աղի ապրանքատեսակներ են, որոնցից 38-ը մատակարարված են տեղական արտադրողի (ԱԱԿ-ի), 14-ը՝ իրանական “C/Z Salt Co” ընկերության, իսկ 9-ը՝ ուկրաինական “Արտեմտոլ” ընկերության կողմից; առնվազն 1-3 տեսակի յոդացված աղ առկա է հետազոտված բոլոր խանութներում (բացառությամբ մեկ փոքր գյուղական խանութի, որտեղ վաճառվում էր միայն չյոդացված աղ): Ընդհանուր առմամբ, յոդով հարստացված աղի հասանելիության համար տարածքային կամ որևէ այլ խոչընդոտ չի արձանագրվել:
- Ռուսաստանի Դաշնությունից ներկրված “Իլեցկայա” կերակրի աղը (“Ռուստոլ” ՍՊԸ, Օրենբուրգի մարզ, ք. Սոլ-Իլեցկ) հայերենով մակնշված էր “յոդացված” (փաթեթին սոսնձված պիտակով), մինչդեռ փաթեթի վրա ռուսերեն և դազախերեն լեզուներով տրված տեղեկատվությունն ապրանքի մեջ առկա քիմիական տարրերի շարքում (նատրիում, սելեն և այլն) կալիում կամ յոդ չէր հիշատակում: Այս հակասությունը պարզելու համար, խանութից գնված 1 կգ “Իլեցկայա” աղի նմուշներն ուղարկվեցին ԱԱԿ և ՀՎԿԱԿ լաբորատորիաներ՝ յոդի առկայությունն ապրանքում որոշելու համար: Կատարվեց լաբորատոր քանակական անալիզ, ստանդարտ տիտրման մեթոդով, ինչպես կալիումի յոդատի, այնպես էլ յոդիդի որոշման համար: Պարզվեց, որ աղն ընդհանրապես յոդ չի պարունակում; այսինքն, փաթեթի պարունակությունը

մակնշմանը չի համապատասխանում (փակցված հայերեն պիտակի նշումով): Ակնհայտ է, որ աղի համարժեքությունն ապահովելու համար այդ ապրանքի ներմուծումը պետք է ավելի մանրակրկիտ կերպով վերահսկվի:

- Զանազան տեսակի յոդացված կերակրի աղի հետ միասին, հետազոտված 32 մթերային խանութներից 17-ի դարակներում հայտնաբերվել են չյոդացված աղի 20 նմուշներ (ընդհանուր 93 նմուշից): Դրանցից երկուսում, վաճառողուհիները տեղյակ էին, որ չյոդացված աղը օգտագործվում է թթու դնելու նպատակով: Նրանք, ըստ երևույթին, կիսում են հայտնի թյուրընկալումները, որ արմատավորված են պատրաստի սնունդ արտադրող առանձին քաղաքացիների մոտ, ովքեր կարծում են, որ յոդացված աղը պիտանի չէ պահածոյացման համար («կրճատում է» արտադրանքի պահպանման ժամկետը):
- Թեև չյոդացված կերակրի աղի մասնաբաժինը շուկայում դեռևս շատ փոքր է, այնուամենայնիվ այն դրսևորում է աճի միտում: Դա կարող է հետագայում ունենալ որոշակի նշանակություն, եթե չյոդացված աղի մասնաբաժինը շարունակի աճել կամ էլ եթե Հայաստանում, ընդհանուր առմամբ, ներդրվի աղի սպառման սահմանափակման ռազմավարություն (ինքնաբերաբար կկրճատվի յոդի ստացումը սննդակարգում):
- ԱՀԿ աջակցությամբ իրականացված STEPS հետազոտության արդյունքները ցույց են տվել (WHO, 2016), որ Հայաստանում 18-69 տարեկան մեծահասակներն օրական սպառում են շուրջ 10 գրամ աղ, որը համարվում է հիպերտոնիայի բարձր ցուցանիշների, սիրտ-անոթային հիվանդությունների և ինսուլտի ռիսկի հիմնական գործոններից մեկը: Այնուամենայնիվ, երկրում սննդակարգով կերակրի աղի սպառման կրճատմանն ուղղված համապարփակ ռազմավարություն առայժմ չի մշակվել:

#### **4. Տնային տնտեսություններում յոդացված կերակրի աղի սպառման և սննդամթերքի արտադրության մեջ դրա օգտագործման մշտադիտարկում**

Այս աշխատանքի շրջանակներում, ԱՀԿ ծրագրի մշտադիտարման բաղադրիչի գնահատման նպատակով իրականացվել է՝

ա) տնային տնտեսություններում յոդացված աղի սպառման տվյալների վերլուծություն (վերաբերվում է կերակուրների պատրաստման համար և սեղանի շուրջ ուղղակիորեն օգտագործվող աղին);

բ) “պատրաստի” կամ արդյունաբերական եղանակով արտադրված սննդամթերքում յոդացված կերակրի աղի օգտագործման պրակտիկայի և յոդային սնուցման մասին այդ մթերքներն արտադրող անձանց գիտելիքների վերաբերյալ տեղեկատվության հավաքում/ամփոփում (փոքրամասշտաբ ՄՊԸ-ների աշխատակիցներ և անհատ



ձեռնարկատերեր՝ հացաթխման, թթուների պատրաստման և պանրագործության բնագավառներում): Պարզվել է հետևյալը՝

- ՀԺԱՀ հետազոտությունները ներկայացնում են երկրում որակյալ յոդացված կերակրի աղ օգտագործող տնային տնտեսությունների մասնաբաժինները, որոնք 2000, 2005 և 2015/16 թվականներին կազմել են համապատասխանաբար 83.6% (>15 մգ/կգ, n=5976), 97,1% (n=6656) and 98,7% (n=7838): Այսպիսով, 2000 թվականից ի վեր տնային տնտեսություններում յոդացված աղի օգտագործումը զգալիորեն բարելավվել է:
- 1997 թվականից ի վեր, ՀՀ առողջապահության նախարարության կողմից իրականացվում էր աղ մշտադիտարկում մանրածախ առևտրի և տնային տնտեսությունների մակարդակներում (ՀՀ ԱՆ հրաման No 405, 18.07.1997թ.): Մակայն, 2007 թվականից հետո, սննդի մոնիթորինգի գործառույթը ՀՀ գյուղատնտեսության նախարարության ՍԱՊԾ-ին փոխանցելու պատճառով, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ը շարունակել է իրականացնել աղում յոդի պարունակության մշտադիտարկում միայն տնային տնտեսությունների մակարդակում (2009-2016 թվականների տվյալները ներկայացված են Հավելված 4-ում): Աղի նմուշառումները կատարում են ՀՎԿԱԿ մասնագետները՝ վարակիչ հիվանդությունների օջախներ իրենց այցելությունների կապակցությամբ (անալիզների արդյունքները մարզային լաբորատորիաներից հաղորդվում են ՀՎԿԱԿ կենտրոնական գրասենյակ՝ ազրեգացման համար):
- 2009-2013 թվականների ժամանակահատվածում ուսումնասիրված աղի 53136 նմուշների ընդհանուր թվում յոդի ազգային ստանդարտին չեն համապատասխանել միայն 22 նմուշ (այսինքն՝ 0,04%-ը); հետագայում, 2014-2016թ.թ. հետազոտված 44818 նմուշներից որևէ մեկը չի եղել չյոդացված կամ անբավարար յոդացված: ՀՎԿԱԿ տվյալները հակասում են 2015-16թ.թ. ՀԺԱՀ հետազոտության արդյունքներին: Վերջինս ցույց է տվել, որ 7838 տնային տնտեսություններից 102-ը (ընդհանուրի 1,3%-ը) օգտագործում է չյոդացված կամ անբավարար յոդացված աղ: ՀՀ բնակչության յոդային սնուցման 2016-2017թ.թ. ազգային ներկայացուցչական հետազոտությունը (Hutchings N., Gerasimov G., 2017; Aghajanova E.M., 2018) նույնպես հայտնաբերել է որոշակի թվով ոչ համարժեք յոդացված աղի նմուշներ՝ ընդհանուր 1041 նմուշներից (35,52 մգ/կգ միջին արժեքի պարագայում), 14-ում (1,34%) յոդի խտությունը եղել է < 5 մգ/կգ; 21-ում (2,02%)՝ < 15 մգ/կգ; 63-ում (6,05%)՝ < 25 մգ/կգ: Հետազոտված նմուշներից 973-ը կամ 93,38%-ը գտնվել է ազգային ստանդարտի՝ 25-55 մգ/կգ սահմաններում, իսկ 5-ում (0,48%) յոդի խտությունը եղել է առաջարկվող ստանդարտից բարձր:
- Մույն հաշվետվության մեջ ներկայացվում են նաև տնային տնտեսություններում յոդացված կերակրի աղի պարունակության դիտարկման արդյունքները՝ 2017-2018թ.թ. ժամանակահատվածի համար (անզլերեն տարբերակը կազմելիս այդ

տվյալները չեն եղել): Հավելված 4-ում բերված տվյալներից երևում է, որ 2018-ին ստանդարտին չհամապատասխանող նմուշների թիվը կազմել է 39 (ընդհանուրի մոտ 1%-ը): ԱՀՅ ծրագրի արդյունավետությունը մնում է բարձր մակարդակի վրա, յոդացված աղի ծածկույթը շարունակաբար գերազանցում է տնային տնտեսությունների 90%-ը, թեև հայտնաբերվում են ստանդարտից շեղումներ: Կարելի է եզրակացնել, որ ԱՀՅ ազգային ռազմավարությունը 2009-ից նվաճել է և առ այսօր պահպանում է ծրագրի գործառնական շեմը (տնային տնտեսությունների ավելի քան 90%-ն օգտագործում է որակյալ յոդացված աղ):

- Մինչև 2017 թվականը, Հայաստանում ԱՀՅ ռազմավարության ընդհանուր մոնիթորինգային համակարգը չէր ներառում խանութներում բնակչությանը վաճառվող և հանրային սննդի կազմակերպություններում ու սննդի արդյունաբերության մեջ օգտագործվող կերակրի աղը: Ի կատարումն ՀՀ առողջապահության և ՀՀ գյուղատնտեսության նախարարությունների Համատեղ հրամանի (տես էջ 11), սկսած 2017 թվականից, ՍԱՊԾ-ը ձեռնամուխ եղավ ***ներմուծվող խմբաքանակներում և արտադրության ու շրջանառության փուլերում կերակրի աղում յոդի պարունակության հետազոտությունների իրականացմանը (ՍԱՊԾ տեղեկատվության ՁԵՎ N 1)***: Նշված տարվա ընթացքում, ՀՀ տարածքում՝ Երևանի և մարզերի խանութներից բերված ու հետազոտված 50 նմուշներից (34-ը ԱԱԿ-ի, իսկ 16-ը ներկրված աղից) 7-ը նորմին չէր համապատասխանում; սահմանային վերահսկողության ընթացքում հետազոտված 44 նմուշներից յոդի պարունակության ստանդարտի շեղումներ արձանագրվեցին 4 դեպքում: ՀՎԿԱԿ-ին տրամադրված պաշտոնական գրությունը, ինչպես նաև ՍԱՊԾ (ներկայիս ՍՍՏՄ) կայքում տեղադրված աղյուսակը չէին արտացոլում ոչ աղի տեսակն ու աղբյուրը (երկիրը և այլն), ոչ էլ անհամապատասխանության բնույթը կամ ձեռնարկված միջոցառումները:
- 2018-ին ՍՍՏՄ հետազոտությունների թիվը կտրուկ աճեց, ընդգրկելով ընդհանուր թվով 289 նմուշներ, ներառյալ 259-ը՝ տեղական արտադրության աղի և 30-ը՝ ներկրված: Երեք մակարդակներում, այն է՝ ա/ առևտրի կազմակերպություններում (խանութներում) վաճառվող, բ/ հանրային սննդի կազմակերպություններում օգտագործվող, և գ/ սննդի արդյունաբերության մեջ կիրառվող կերակրի աղում արձանագրվեցին յոդի պարունակության շեղումներ ստանդարտից՝ ա/ ընդամենը հետազոտված 91 նմուշից 8-ում, բ/ 106-ից՝ 11-ում, և գ/ 92-ից՝ 7-ում: Այսինքն, ընդհանուր թվով 289 նմուշներից ստանդարտին չեն համապատասխանել՝ 26-ը: Վերջիններս տեղ են գտել միայն տեղական աղի նմուշների՝ 259-ի թվում, կազմելով դրանց 10%-ը; ներկրված աղի խմբաքանակներից վերցված 30 նմուշների մեջ յոդի պարունակության անհամապատասխանություն չի գրանցվել:
- Համաձայն “ԱՀՅ փորձառությունն ու նվաճումները ԿԱԵ/ԱՊՀ երկրներում, 2000–2009թ.թ.” ակնարկի (F. van der Haar, G. Gerasimov, et al., 2011), Հայաստանի տնային

տնտեսություններում օգտագործվող յոդացված աղի համամասնական ներդրումը բնակչության կողմից սպառվող յոդի ընդհանուր քանակում փոքր է, համեմատած յոդացված աղի կիրառմամբ արտադրված պատրաստի սննդամթերքից ստացվող քանակի հետ (թեև, առայժմ տվյալներ չեն ներկայացվում): Նկատի ունենալով այս ենթադրությունը, սնունդ արտադրողների փոքր ընտրանքում կատարվել է հետազոտություն, նպատակ ունենալով հարցումային եղանակով ուսումնասիրել պատրաստի սննդամթերքում յոդացված կերակրի աղի կիրառման պրակտիկան, ինչպես նաև է գնահատել սնունդ արտադրողների իրազեկությունը յոդային սնուցման վերաբերյալ (ի վերջո պարզել բացերը, եթե այդպիսիք կան, և հիմնավորել հաղորդակցության և վերահսկողության հետագա աշխատանքները):

- Հետազոտությունն իրականացվել է այս նախագծում դրված խնդիրների շրջանակներից դուրս: Ընդգրկվել են լայն սպառում ունեցող երեք տեսակի մթերային ապրանքներ՝ հաց (հիմնական սննդամթերք, մոտ 400 գ/օր), տեղական պանիր և բանջարեղենային թթուներ, որոնք պատրաստվում և մատակարարվում են «փոքր մասշտաբով» (տարեկան 2-12 տոննա), մանր և միջին կազմակերպությունների՝ ՄՊԸ-ների և անհատ ձեռնարկատերերի կողմից, մեզ համար հետաքրքրություն ներկայացնող բնակավայրերում (Երևան և մոտակա համայնքներ): Ընտրված 59 արտադրողներից հարցմանը համաձայնվել են մասնակցել 42-ը (17 արտադրողներ հրաժարվել են մասնակցել հարցմանը, համարելով այն «ստուգում» կամ տեխնոլոգիայի «գաղտնագրծում»): Հետազոտության հարցաթերթը ներկայացված է Հավելված 5-ում (հարցաթերթի մշակման և հարցվողների պատասխանների ամփոփման աշխատանքները կատարվել են համագործակցելով ՀՀ ԱՆ ԾԻԳ-ի մոնիթորինգի և գնահատման մասնագետ Ն.Սերգենայի և հոգեբանության ազատ խորհրդատու Ա.Զաքարյանի հետ):
- Պատրաստի սննդամթերք արտադրողների կողմից յոդացված աղ կիրառելու վերաբերյալ հարցի պատասխաններն ամփոփված են ստորև, աղյուսակում: Բերված թվերը ցույց են տալիս, որ հարցվածների մեծամասնությունը՝ 42-ից 34-ը (հարցվածների 81%-ը) կիրառում է յոդացված, 5-ը՝ չյոդացված աղ, իսկ 3 արտադրողներ վստահ չեն, այսինքն չգիտեն թե ինչպիսի աղ են օգտագործում (աղի տեսակին նշանակություն չեն տալիս և մակնշմանն ուշադրություն չեն դարձնում): Անիրազեկ արտադրողները ենթադրաբար օգտագործում են յոդացված կամ չյոդացված աղ, կամ էլ թե մեկը, թե մյուսը: Հետևաբար, յոդացված աղի օգտագործմամբ պատրաստի սնունդ արտադրող ձեռնարկատերերի խումբը կարող է համարվել նույնիսկ ավելի մեծ (> 81%): Սույն արդյունքն, ըստ էության, հաստատում է նախկինում արված ենթադրությունն (F. van der Haar, G. Gerasimov, et al., 2011) առ այն, որ Հայաստանում պատրաստի սննդամթերք արտադրողները վճռորոշ ներդրում ունեն սննդակարգի միջոցով յոդի սպառման պատշաճ մակարդակ ապահովելու գործում:

Աղյուսակ. Պատրաստի սննդամթերքում յոդացված կերակրի աղի օգտագործման վերաբերյալ հարցման արդյունքները (սնունդ արտադրողների փոքր ընտրանքում)

Պատրաստի սննդամթերքի տեսակը	Մննդամթերքն արտադրողների թիվը	Օգտագործում է յոդացված աղ		
		Այո	Ոչ	Վստահ չէ
Հաց	34	27	4	3
Պանիր	4	4	0	0
Թթու	4	3	1	0
<b>Ընդամենը:</b>	<b>42</b>	<b>34</b> (81%)	<b>5</b> (12%)	<b>3</b> (7%)

- Հետազոտության մյուս արդյունքները՝
  - Պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ յոդացված աղ օգտագործող 34 անձանցից 23-ը (68%) պատճառաբանել են իրենց ընտրությունն առողջության համար յոդի օգտակարության հանգամանքով, 7-ը՝ յոդացված «էքստրա» աղի մշտական առկայությամբ և մատչելիությամբ, մեկը՝ բուժաշխատողի խորհրդով, մյուս երեքը որևէ պատճառ չեն նշել;
  - Չյոդացված աղի օգտագործմամբ սնունդ արտադրող 5 ձեռնարկատերերից 4-ը սովորաբար գնել է չյոդացված չփաթեթավորված քարաղ, նկատի ունենալով վերջինիս համեմատաբար էժան լինելը, իսկ մեկը՝ պատճառաբանել է իր այդպիսի ընտրությունը “ավելի համով” հաց թխելու ցանկությամբ: Տնտեսելու նպատակով էժան չյոդացված աղ օգտագործող 4 հարցվողներից մեկը՝ գյուղում լավաշ արտադրող միակ հացթուխն ուներ լավ գիտելիքներ վահանաձև գեղձի պատշաճ գործունեության համար բավարար քանակով յոդ ստանալու անհրաժեշտության մասին (հացթուխի դուստրը մանկաբարձուհի է, ունի խալիպ և ստանում է համապատասխան բուժում, բնականաբար ողջ ընտանիքը տեղյակ է յոդի անբավարարությամբ պայմանավորված խանգարումների մասին);
  - Հարցված սնունդ արտադրողների ավելի քան կեսը (58-60%) չունեի որևէ կամ ունեի սխալ պատկերացում, որ յոդն անհրաժեշտ է վահանաձև գեղձի պատշաճ գործունեության համար, երբևէ չէր լսել օրգանիզմում յոդի անբավարարության հետևանքների մասին, չէր լսել կամ տեսել որևէ տեղեկատվություն Հայաստանում յոդի անբավարարության կանխարգելման և այդ նպատակով կերակրի աղի յոդացման կարևորության վերաբերյալ;
  - Հետազոտության ընթացքում հարցված սնունդ արտադրողների կեսից պակասը (40-42%) ուներ որոշ տեղեկություններ յոդի անբավարարության մասին և

կարծում է, որ խնդիրը լուծելու ռազմավարություններ կան: Այս հարցվողները նշել են յոդի անբավարարության և դրա կանխարգելման վերաբերյալ տեղեկատվության ապահովման մեկից ավելի աղբյուրներ, հետևյալ նվազման կարգով՝ բարեկամներ/ընկերներ, հեռուստատեսություն, բուժաշխատողներ, տպագիր մամուլ, համացանց:

- Նկատվում է որոշակի անհամապատասխանություն (բաց) յոդացված աղի օգտագործման պրակտիկայի և յոդի անբավարարության կանխարգելման վերաբերյալ սնունդ արտադրողների իրազեկվածության մակարդակի միջև: Ակնհայտ է, որ անհրաժեշտ է իրականացնել նպատակային աշխատանք (քարոզչություն) պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ յոդացված աղի կիրառման օգուտների վերաբերյալ:
- Պատրաստի սննդամթերքների շարքում, յոդացված աղի օգտագործումը հացի արտադրության մեջ համարվում է յոդի մատակարարման ամենաարդյունավետ ռազմավարությունը (Գ.Գերասիմով, 2009թ.): Մեկուսի բնակավայրի պարագայում, հացաթխման մեջ չյոդացված աղի կիրառումը կարող է սահմանափակել յոդով հարստացված աղի հասանելիությունը տվյալ վայրում բնակվող մարդկանց համար (համեմատած այն մարդկանց հետ, ովքեր ապրում են ավելի մեծ բնակավայրում, որտեղ կան փռեր, ուստի և՛ այլընտրանք):

## **5. Յոդային սնուցման կարգավիճակի և ՅԱԽ տարածվածության մշտադիտարկում**

ՀՀ բնակչության յոդային սնուցման կարգավիճակը բնութագրող տվյալների (ՄՅ խտությունը նպատակային խմբերում) և ՅԱԽ տարածվածությանն առնչվող առողջապահական վիճակագրության ակնարկը հնարավորություն տվեց պարզել հետևյալ հիմնական հարցերը՝

- Յունիսեֆ-ի աջակցությամբ 1998 և 2005 թ.թ. կատարված ՄՅԽ անալիզներից հետո, այսինքն՝ հաջորդող 12 տարիների ընթացքում, յոդի անբավարարության հետևանքների դեմ պայքարի և կանխարգելման ազգային ծրագրի շրջանակներում ՄՅԽ կանոնավոր մոնիթորինգ չի իրականացվել: ՅԱԽ էլիմինացիայի առաջընթացը չի գնահատվել (այսինքն՝ վերջին ազգային հետազոտությունից հետո անցել է 12 տարի):
- ՀՀ բնակչության յոդային սնուցման երրորդ ազգային ներկայացուցչական հետազոտությունն իրականացվեց 2016 թվականի տարեվերջից մինչև 2017-ի կեսերը, որպես համատեղ նախագիծ՝ ՀՀ ԱՆ հովանու ներքո, ՅԳՑ (IGN) աջակցությամբ, ԵՊԲՀ (ՀՀ ԿԳՆ), ԱՄՆ Կոլումբիայի համալսարանի և Բոստոնի Բժշկական կենտրոնի (ԲԿ) մասնակցությամբ (N.Hutchings, G.Gerasimov, 2017; E.Aghajanova, 2018): Նախագծի ընտրանքում ներառված 1,125 մասնակիցներից


(Հայաստանի 13 քաղաքներից) հավաքվեցին մեզի նմուշներ և ուղարկվեցին Բոստոնի ԲԿ լաբորատորիա; բավարար նմուշների թիվը կազմեց 1078, ըստ հետևյալ երեք նպատակային խմբերի՝ դպրոցահասակ երեխաներ – 361 (միջին տարիքը՝ 10.54±1.11 տարի), հղի կանայք – 356 (26.14±4.69 տարի) և վերարտադրողական տարիքի կանայք - 361, (35.46±8.68 տարի): Հետազոտության արդյունքները՝ յոդի խտությունը մեզում և յոդի պարունակությունը կերակրի աղում ներկայացվեցին “Յոդի հագեցվածության հիմնախնդիրը Հայաստանում” կոնֆերանսի (Երևան, 10 հոկտեմբերի 2017թ.) և “Յոդի մոնիթորինգի տարածաշրջանային խորհրդակցության” (Թբիլիսի, 20 փետրվարի 2018թ) ժամանակ: Այդ արդյունքները հաստատեցին, որ երկրի բնակչությունն ունի ադեկվատ յոդային սնուցում և պաշտպանված է յոդային անբավարարությունից՝ դպրոցահասակ երեխաների մեզում մեզում յոդի խտության մեդիանան կազմում է 242 մկգ/Լ (Q1-203, Q3-289) և հղի կանանց մեզում՝ 226 մկգ/Լ (Q1-203, Q3-289), իսկ վերարտադրողական տարիքի կանանց մեզում՝ 311 մկգ/Լ (Q1-244, Q3-371), այսինքն՝ ԱՀԿ կողմից առաջարկվող սահմաններում (WHO, 2007): Իրավիճակը գնահատվեց որպես կայուն հաջողություն ՅԱԽ վերացման գործում (Gerasimov G.A., van der Haar F., Lazarus J.H., 2017; N.Hutchings, G.Gerasimov, 2017):

- Վերոհիշյալ բոլոր երեք հետազոտություններն իրականացվել են արտաքին օգնության միջոցով (ՄՅ անալիզները կատարվել են արտերկրում՝ յոդի որոշման համար հավատարմագրված հեղինակավոր լաբորատորիաներում): Դեռևս 2005 թվականին խնդիր է դրվել քննության առնել համապատասխան ազգային լաբորատորիայի ստեղծման հնարավորությունը, նպատակ ունենալով դրա պարագայում Հայաստանում կատարել ՄՅԽ որոշման կանոնավոր հետազոտություններ: Յոդային սնուցման գնահատման համակարգի ամրապնդման անհրաժեշտությունը վերահաստատվել է նաև ՀՀ կառավարության 2014թ. No 40 որոշման մեջ: Սակայն, ՄՅ անալիզների մասնագիտացված լաբորատորիա առայժմ չկա, թեև այդպիսին կարող էր ստեղծվել և պահպանվել ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի նորակառույց (2016թ.) ժամանակակից Ազգային Ռեֆերենս Լաբորատորիայի կառուցվածքում (ԱՌԼ կատարած այցելությունը ցույց տվեց, որ աշխատակազմը պատրաստակամ և ունակ է կատարել համապատասխան անալիզներ և ստանալ տվյալներ ՄՅ վերաբերյալ):
- Խպիպի տարածվածության վերջին ընտրանքային ներկայացուցչական հետազոտությունը Հայաստանում իրականացվել է 1995 թվականին, կիրառելով վահանաձև գեղձի շոշափման (պալպացիայի) մեթոդը: Հետագա 22 տարիների ընթացքում որևէ այդպիսի հետազոտություն չի իրականացվել: Թեթև և միջին ծանրության յոդային անբավարարությամբ աչքի ընկնող տարածաշրջանների համար որպես հետազոտության գերադասելի գործիք առաջարկվող (ԱՀԿ, 2014) ուլտրաձայնային սոնոգրաֆիայի մեթոդը չի կիրառվել; իսպիպը որպես ՅԱԽ

վերացման ծրագրի արդյունավետության գնահատման երակարածամկետ զգայուն ցուցանիշ չի օգտագործվել:

- **Հայաստանի առողջապահական տեղեկատվական համակարգն (ԱԱԻ/ԱՏՎԿ)** իրականացնում է ոչ վարակիչ հիվանդությունների մշտադիտարկում (բժշկական կենտրոններից ստացված ագրեգացված տվյալների հիման վրա) և, 2007 թվականից ի վեր, երկրի առողջապահական վիճակագրության համակարգը, հաշվետվությունների No 13 ձևի օգնությամբ, ընդգրկում է վահանաձև գեղձի հիվանդությունները (E00-E07), ներառյալ յոդի անբավարարության բնածին համախտանիշը (E00), վահանաձև գեղձի հիվանդությունները՝ պայմանավորված յոդի անբավարարությամբ և համանման վիճակներով (E01), յոդի անբավարարության հետևանքով զարգացած նախակլինիկական հիպոթիրեոզը (E02):
- ԱԱԻ/ԱՏՎԿ-ի 2009-2016թ.թ. տվյալները ցույց են տալիս (Գծագիր 1), որ նշված ժամանակահատվածում՝ այսինքն 7 տարվա ընթացքում գրանցվել է հաշվառվող երեք ՅԱԽ-երի բացարձակ թվի զգալի աճ (ավելի քան երկու անգամ): ՀՀ ԱՆ հարցված մասնագետների կարծիքով (Դ.Անդրեասյան, ԱԱԻ/ԱՏՎԿ ղեկավար; Է.Թորոմանյան և Ե.Աղաջանովա, ՀՀ ԱՆ գլխավոր ներզատաբաններ), այս աճը չի կարող վերագրվել յոդի անբավարարությանը, հաշվի առնելով հետևյալը՝
  - Հայաստանում պարագայում, յոդով հագեցած բնակչության շրջանում (նկատի ունենալով յոդացված աղի սպառման 97%-ից ավելի համամասնությունը և ՄՅ մակարդակները նպատակային խմբերում) անհնար էր տարբերակել յոդի անբավարարությամբ պայմանավորված խաչալը և նախակլինիկական հիպոթիրեոզը խաչալի այն դեպքերից, որոնք կարող են առաջանալ սննդակարգում գոյթրոգեն նյութերի առկայության կամ վահանաձև գեղձի աուտոիմուն հիվանդությունների պատճառով;
  - Գործնականում, ԱԱՊ մակարդակում (հատկապես գյուղական վայրերում), ՅԱԽ ախտորոշումը հաճախ հիմնված է հիվանդների զանգատների վրա, առանց վահանաձև գեղձի ուլտրաձայնային հետազոտության և յոդային սնուցման վիճակի ֆունկցիոնալ ցուցանիշների գնահատման: Մասնագետները կարծում են, որ դա կարող է հանգեցնել ՅԱԽ գերախտորոշման:

Գծագիր 1: Յոդի անբավարարությամբ պայմանավորված վահանաձև գեղձի հիվանդությունների տարածվածությունը Հայաստանում, 2009-2016 թ.թ. (տվյալները սրամադրել է ՀՀ ԱՆ ԱԱԻ/ԱՏՎԿ տնօրեն Դ.Անդրեասյանը)



- Պայմանավորվածությունն ձեռք բերվեց՝ առաջարկել ՅԱԽ-երի հաշվառման No 13 հաշվետվության ձևը վերացնել և, փոխարենը, էնդոկրին հիվանդությունների խմբի համար նախատեսված No 3 հաշվետվության ձևի մեջ մտցնել վահանաձև գեղձի խանգարումների հաշվառման տող: Ընդգծվեց նաև բժշկական հաստատություններում մասնագետների հետագա վերապատրաստման անհրաժեշտությունը: Այս փուլում, երկրի բնակչության մասշտաբով խափափ տարածվածության ներկայացուցչական հետազոտություն իրականացնելը նպատակահարմար չի համարվում:

**6. Հայաստանում ԱՀՅ ռազմավարությանն աջակցելու նպատակով իրականացվող հաղորդակցության միջոցառումները**

Հաղորդակցության միջոցառումների վերաբերյալ առկա տեղեկատվության վերլուծությունը թույլ տվեց պարզել հետևյալ առանցքային հարցերը՝

- Հայաստանում ԱՀՅ ռազմավարության իրականացման համար մշակված գրեթե բոլոր կարգավորող փաստաթղթերը՝ ՀՀ կառավարության որոշումները և գործողությունների պլանները, նախարարական հրամանները և այլն (գլուխ 2) պարունակում են որոշակի դրույթներ հաղորդակցության միջոցառումների վերաբերյալ: 2005-2007թ.թ. ընթացքում, Յունիսեֆ-ի լայնածավալ աջակցության շնորհիվ, ԱՀՅ ազգային ծրագիրը իրականացրել է դասընթացներ, հանրային կրթության և սոցիալական մոբիլիզացիայի միջոցառումներ, նպատակ ունենալով բարձրացնել գիտելիքների մակարդակը ՅԱԽ կանխարգելման և յոդացված աղի



սպառման (օգտագործման) վերաբերյալ: Այս միջոցառումներն, այնուամենայնիվ, հիմնականում կենտրոնացած էին առողջապահության ոլորտի մասնագետների վերապատրաստման վրա (կարճաժամկետ դասընթացներ աշխատավայրում): Ըստ էության, Հայաստանին հաջողվեց հասնել ԱՀՅ ռազմավարության ներդրման առանց հաղորդակցության լայնածավալ հանրային արշավների անցկացման: (ըստ երևույթին, հիմնականում շնորհիվ ԱԱԿ նպատակալաց աշխատանքի, որը շարունակաբար մատակարարում է պաշաճորեն յոդացված կերակրի աղ):

- 2011-ից մինչև 2017 թվականն ընկած ժամանակահատվածում, ՀՀ ԱՆ Հասարակայնության հետ կապերի բաժինը կազմակերպել է հանրային առողջապահության հարցերով հաղորդակցության ապահովման ավելի քան 300 միջոցառումներ, բայց դրանցից որևէ մեկը չի նվիրվել ԱՀՅ նշանակության և օգուտների վերաբերյալ իրազեկության մակարդակի բարձրացմանը:
- 2016-2017 թվականներին, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ը՝ երկրի խոշորագույն հանրային առողջապահության հաստատությունը և ՅԱԽ վերացման ազգային ծրագրի գլխավոր շահագրգիռ կողմը, իր ֆեյսբուքյան էջում զետեղել է երկու կարճ հաղորդագրություն, առաջինը՝ տնային տնտեսություններում յոդացված աղի պահպանման պայմանների մասին և երկրորդը՝ առաջարկություն կերակրի աղի ընդունման մակարդակն մինչև 5-6 գրամ/օր կրճատելու վերաբերյալ (ընդօժեղով, բայց և այնպես, որ այն պետք է լինի յոդացված):
- 2017թ. հոկտեմբերին կայացած “Յոդի հազեցվածության հիմնախնդիրները Հայաստանում” կոնֆերանսից հետո, “Ջինիշյան հիմնադրամի” աջակցությամբ և մի խումբ երիտասարդ բժիշկների մասնակցությամբ երկրում մեկնարկեց յոդային սնուցման և ՅԱԽ հաշվետվությունների տրամադրման հարցերին նվիրված սեմինարների շարք (2017 թվականի նոյեմբերի կեսից մինչև դեկտեմբերի կեսը): Հաղորդակցման աշխատանքների այս հատվածը նորից ուղղված էր առողջապահության ոլորտի մասնագետների շրջանում (ԱԱՊ օղակի ընտանեկան բժիշկներ, գինեկոլոգներ և ներգատաբաններ) իրազեկության ձևավորմանը՝ բնակչության յոդային սնուցման իրավիճակի (ՄՅ հետազոտության արդյունքներով) և հաշվետվության նոր ձևի ներդրման վերաբերյալ (տես գլուխ 5):
- ԱՀՅ ռազմավարությանը նվիրված հաղորդակցության միջոցառումները ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ում և ՀՀ ԿԵ ՄՍՏՄ-ում կամ այլ շահագրգիռ կազմակերպություններում ինստիտուցիոնալացված չեն: Առևտրի աշխատողների և պատրաստի սննդամթերք արտադրողների շրջանում չեն իրականացվում թիրախային հաղորդակցման ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ հատկապես լրացնել գիտելիքների պակասը և պարզաբանել չյոդացված աղի պահանջարկը խրախուսող թյուրընկալումները (տես գլուխ 4):

## 7. Եզրակացություններ

Հայաստանում ՅԱԽ վերացման ազգային ծրագրի տարբեր բաղադրիչների իրականացման կարգավիճակի և ԱՀՅ ռազմավարության առաջընթացի գնահատման արդյունքները թույլ են տալիս ուրվագծել ծրագրի հետևյալ հիմնական ուժեղ և թույլ կողմերը:

Հիմնական ուժեղ կողմերը.

- ԱՀՅ ռազմավարության իրականացումը Հայաստանում հիմնված է մի շարք կարգավորող (նորմատիվ) փաստաթղթերի վրա, որոնք սահմանում են կերակրի աղի պարտադիր յոդացման պահանջ: Թնային տնտեսություններում և սննդի արդյունաբերության մեջ օգտագործելու համար երկրում չյոդավորված աղի արտադրությունն ու ներկրումն արգելված է: Հայաստանում ընդունված է և պահպանվում է յոդի միջազգայնորեն հաստատված ստանդարտ և գրանցվում են աղի յոդացման պատշաճ մակարդակներ:
- Երկրում արտադրվող և երկիր ներկրվող յոդացված աղի ընդհանուր քանակը թնային տնտեսություններում և սննդի արդյունաբերության մեջ օգտագործելու համար ներկայումս բավարար է: Ավանի աղի կոմբինատը (ԱԱԿ) շարունակում է մնալ ԱՀՅ ռազմավարության հզոր ջատագովր: ԱԱԿ-ն աղի շուկայում գերիշխող դիրք է զբաղեցնում: կոմբինատը հետևողականորեն և պատշաճորեն յոդացնում է իր ուտելի աղի արտադրանքը և, այդպիսով, մեծապես նպաստում է բնակչության շրջանում օպտիմալ յոդային սնուցման մակարդակի պահպանմանը:
- ՀՀ ԺԱՀ հետազոտության և ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի կանոնավոր մշտադիտարկման արդյունքները ցույց են տալիս, որ վերջին մի քանի տարիների ընթացքում երկրի գրեթե բոլոր թնային տնտեսությունները (> 97%) սպառում են համարժեքորեն յոդացված աղ (ճաշասեղանի շուրջ՝ ուտելու ժամանակ և խոհանոցում՝ կերակուրներ պատրաստելու համար): ՀՀ ԿԵ ՄԱՍՄ-ն արդեն սկսել է իրականացնել յոդացված աղի տեսչական վերահսկողություն և մշտադիտարկում առևտրի ցանցում և սննդի արդյունաբերության կազմակերպություններում: Յոդացված աղի ապրանքատեսակները հասանելի են բոլոր մթերային խանութներում և լայնորեն օգտագործվում են սնունդ արտադրողների կողմից:
- Մեզում յոդի պարունակության (ՄՅ) ազգային ներկայացուցչական հետազոտությունը (“բիոմոնիթորինգը”, որն արտաքին աջակցության շնորհիվ իրականացվեց վերջերս) հաստատում է, որ երկրի բնակչությունն ունի ադեկվատ յոդային սնուցում և պաշտպանված է յոդային անբավարարությունից: Հայաստանի խոշորագույն հանրային առողջապահության հաստատությունը՝ ՀՎԿԱԿ-ը, ստեղծել է համընդհանուր լաբորատոր ցանց, որը գործում է 2016-ի կեսից, ունի գլխամասային

արդիական Ազգային ռեֆերենս լաբորատորիա (ԱՌԼ). վերջինս ունի ներուժ ՄՅ մակարդակի գննությունը հետագայում շարունակելու համար:

Հիմնական թույլ կողմերը.

- Հայաստանում, ԱՀՅ ռազմավարության իրավական կարգավորումները ներակայացված են զանազան նորմատիվ ակտերով՝ կառավարության որոշումներով, գործողությունների պլաններով և նախարարական հրամաններով: Յողի պարունակության մշտադիտարկումը տնային տնտեսություններում օգտագործվող աղում իրականացնում է առողջապահության համակարգի մասնագիտացված կառույցը՝ ՀՎԿԱԿ-ը, մանրածախ առևտրի ցանցում վաճառվող և պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ կիրառվող աղում՝ գյուղատնտեսական ոլորտի սննդի անվտանգության պետական ծառայությունը (նախկին ՍԱՊԾ, իսկ 2019թ. մայիս ամսից՝ ՀՀ ԿԵ ՍԱՏՍ): Վերջին ՄՅ բիոմոնիթորինգը իրականացվել է կրթության ոլորտի հաստատության՝ ԵՊԲՀ-ի աջակցությամբ (կրկին արտաքին ֆինանսական և տեխնիկական օգնության շնորհիվ): Յուրաքանչյուր ոլորտ զբաղվում է իրեն ամրագրված բաղադրիչով; վերոնշյալ շահագրգիռ կողմերի ջանքերը մեկտեղելու համապարփակ և նորացված գործողությունների ծրագիր գոյություն չունի: Դեռևս անդրադարձ չի եղել ՀՀ կառավարության N 353-Ն որոշմամբ սահմանված դրույթին (2բ), որը թույլատրում է պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ բացառության կարգով կիրառել չյոդացված աղ (անհրաժեշտ է այնպիսի լուծում, որն առնվազն կկանխի չյոդացված աղի օգտագործումը հացաթխման մեջ):
- Հայաստանում ՅԱԽ վերացման ազգային ծրագրի և ԱՀՅ ռազմավարության իրականացման համար չի ձևավորվել որևէ գերակա մեխանիզմ (միջոլորտային վերադաս հանձնաժողով կամ աշխատանքային խումբ), որը կհամակարգեր համապատասխան միջամտությունները առողջապահության ոլորտում և դրանից դուրս: Ազգային ծրագրի մեկնարկի ժամանակ ձևավորված և արդյունավետորեն գործող Բազմամասնագիտական աշխատանքային խումբը դեռևս չի վերականգնվել; ՅԱԽ վերացման ազգային ծրագրի ղեկավար չի նշանակվել; չի իրականացվում համատեղ գործընկերային վերահսկողություն:
- ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի կողմից տնային տնտեսություններում օգտագործվող կերակրի աղի կանոնավոր մշտադիտարկումն ընդգրկում է աղի հսկայաքանակ լաբորատոր անալիզներ՝ տարեկան մի քանի հազար, թեև վերջին տարիների ընթացքում որևէ անհամապատասխանություն չի հայտնաբերվել (ԺԱՀՀ և մեկ այլ աշխատանքում այնուամենայնիվ շեղումներ ֆիքսվել են); ըստ երևույթին, մատակարարից հիմնականում ստացվում է որոշակի որակի ապրանք և, ամենայն հավանականությամբ, տնային տնտեսություններում գերակշռում է ԱԱԿ որակյալ

“Էքստրա” սեղանի աղը, սակայն, մշտադիտարկման արդյունքներում աղի աղբյուրը և տեսակը չի նշվում; կերակրի աղի որակի հաճախակի վերահսկման ռազմավարությունը չի վերանայվում:

- **Մանրածախ առևտրի, հանրային սննդի կազմակերպություններում և սննդի արդյունաբերության մեջ** ՀՀ ԿԵ ՍՍՏՄ-ի կողմից իրականացվող (2017-ից) մշտադիտարկման տվյալները (2017-ին՝ 50 անալիզ, 2018-ին՝ 289 անալիզ) չեն ընդգրկում տեղեկատվություն աղի աղբյուրների և տեսակների, նմուշառման վայրի և այլ գործոնների մասին (հասանելի չեն ինտերնետային կայքում): Ըստ երևույթին, կերակրի աղը դեռևս չի գտնվում վերահսկողության կիզակետում (2017-ին հայտնաբերվել է ներկրված աղի մեկ նմուշ, որը մակնշված է եղել որպես յոդավորված աղ, սակայն դրա պարունակությունը մակնշմանը չի համապատասխանել՝ աղը յոդ չի պարունակել): 2018 թվականին, խանութներում վաճառվող, հանրային սննդի կազմակերպություններում օգտագործվող և սննդի արդյունաբերության մեջ կիրառվող կերակրի աղի խմբաքանակներից վերցված նմուշների 10%-ում յոդի պարունակությունն ազգային ստանդարտին չի համապատասխանել, սակայն այս մտահոգիչ փաստը շահագրգիռ կողմերի համատեղ քննարկումների առարկա չի դարձել:
- Չնայած պատրաստի սննդամթերքի արտադրության մեջ յոդացված աղ օգտագործելու նախընտրելի պրակտիկային, սնունդ արտադրողներից շատերը, ինչպես կարելի է նկատել, չունեն բավարար գիտելիքներ՝ յոդի, որպես վահանաձև գեղձի գործունեության համար կենսականորեն անհրաժեշտ միկրոտարրի մասին, ՅԱԽ հիմնախնդրի և յոդով հարստացված կերակրի աղի միջոցով ՅԱԽ կանխարգելման մասին: Առևտրի ցանցում և պատրաստի սննդամթերք արտադրողների շրջանում չեն իրականացվում նպատակային հաղորդակցման ծրագրեր, որոնց շնորհիվ հնարավոր կլիներ լրացնել համապատասխան գիտելիքների պակասը և պարզաբանել չյոդացված աղի պահանջարկը խրախուսող թյուրընկալումները:
- Չնայած ժամանակակից լաբորատոր ցանցի առկայությանը, երկրում դեռևս չկա մասնագիտացված լաբորատորիա, որտեղ հնարավոր կլիներ իրականացնել ՄՅ սխտեմատիկ հետազոտություններ:

## 8. Հիմնական առաջարկությունները

Քանի որ Հայաստանի Հանրապետությունը հասել է երկրում ԱՀՅ ռազմավարության ներդրման և ՅԱԽ վերացման նպատակներին (վերահաստատված է այս զեկույցում), ուստի ՅԱԽ վերացման ազգային ծրագրի որոշ բաղադրիչների իրականացման կարգավիճակի գնահատումը նպատակ ունի ուրվագծել առաջընթացի մի քանի լրացուցիչ քայլեր (առաջարկություններ, ուղղված ծրագրի կայունության ամրապնդմանը):

- ՀՀ առողջապահության նախարարությունը, համագործակցելով ՀՀ էկոնոմիկայի նախարարության հետ, պետք է վերանայի կերակրի աղի պարտադիր յոդացման կանոնակարգային դրույթներում (ՀՀ կառավարության որոշում No 343, կետ 2բ) տեղ գտած այն բացը, որը հնարավորություն է տալիս սննդի արդյունաբերության մեջ կիրառել չյոդացված աղ՝ այն դեպքերում, երբ յոդացված կերակրի աղի օգտագործումը չի թույլատրվում արտադրության տեխնոլոգիայով (առանց այդ դեպքերը կոնկրետացնելու), և հասնի “իրական ԱՀՅ ռազմավարության” ներդրման, որպեսզի ԱՀՅ-ն ընդգրկի ինչպես տնային տնտեսությունների, այնպես էլ սննդի արդյունաբերության համար մատակարարվող ողջ աղը: ՀՀ ԿԵ ՍՍՏՄ-ը պետք է նշի իր հրահանգներում (աուդիտի), որ վերոհիշյալ բացառությունը չի վերաբերվում լայնորեն օգտագործվող պատրաստի սննդամթերքներին, նախ և առաջ, խանութներում վաճառվող հացամթերքին՝ Հայաստանում առավել կարևոր նշանակություն ունեցող հիմնական սննդամթերքին (և յոդի փոխադրման լավագույն միջոցին): Յոդացված աղի համընդհանուր կիրառումը հացաթխման մեջ թույլ կտա ապահովել յոդով հարստացված աղի հավասար հասանելիությունը բնակչության բոլոր խմբերին:
- ՀՀ առողջապահության նախարարությունը պետք է վերականգնի իր Բազմամասնագիտական աշխատանքային խումբը (ԲԱԽ) և նշանակի ՅԱԽ վերացման ազգային ծրագրի ղեկավար, ով կապահովի ԱՀՅ ռազմավարության իրականացման վերահսկողությունը և կմիավորի շահագրգիռ կողմերին, որպեսզի նրանք կարողանան համատեղ ղեկավարել առաջընթացը, քննարկել ընթացիկ տեղեկատվությունը, որոշումներ կայացնել խոչընդոտների վերաբերյալ և կանոնավոր հրապարակայնությամբ ապահովել հաշվետվողականություն: Այս տեսակետից, հիմնական շահագրգիռ կողմերը՝ ՀՎԿԱԿ-ն ու ՍՍՏՄ-ը պետք է բարելավեն ԱՀՅ վերաբերյալ վերջին կարգավորող փաստաթուղթը՝ ՀՀ ԱՆ և ՀՀ գյուղատնտեսության նախարարության համատեղ հրամանը (2016թ.), ներառելով փաստաթղթում լրացուցիչ դրույթ, որը կամրագրի ԲԱԽ կազմը՝ նախագահին և անդամներին՝ ներկայացված տարբեր ոլորտներից ու գործընկեր կազմակերպություններից՝ առողջապահությունից (ՀՎԿԱԿ, ԱԱԻ), ՀՀ ԿԵ ՍՍՏՄ-ից, էկոնոմիկային նախարարությունից, ԵՊԲՀ-ից, աղի արդյունաբերությունից (ԱԱԿ),

ինչպես նաև առևտրի և սնունդ արտադրողների ասոցիացիաներից, ՁԼՄ-ներից և սպառողական ՀԿ-ներից (տեղնիկական առաջադրանքի նախագիծը ներկայացված է Հավելված 6-ում): ԲԱԽ-ը պետք է գումարի եռամսյակային հանդիպումներ և քննարկի ԱՀՅ ծրագրի մշտադիտարկման արդյունքները (ՀՎԿԱԿ և ՍԱՏՄ տվյալները) և հրավիրի տարեկան ժողով՝ քննարկելու ձեռքբերումներն ու կարիքները, ինչպես նաև օժանդակի տեղեկատվության տարածմանը, չսահմանափակվելով միայն ՀՎԿԱԿ և ՍԱՏՄ միջև ամփոփ տվյալների պաշտոնական փոխանակմամբ:

- Յոդային սնուցման գնահատման համակարգը (բիոմոնիթորինգ) պետք է ամրապնդվի, նպատակ ունենալով ապահովել յոդային անբավարարության վերացման կայունությունն ապագա սերունդների համար: Այս տեսակետից, ՀՀ առողջապահության նախարարությունը պետք է բարելավի իր մշտադիտարկման ներուժը, ներդնելով մեզում յոդի խտության որոշման մեթոդաբանությունը ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի նորաստեղծ ժամանակակից ռեֆերենս լաբորատորիայի աշխատանքներում:
- ԱՀՅ ռազմավարության քարոզչությունը պետք է դառնա ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ, ԱԱԻ/ԱՏՎԿ, ԱՆ Հասարակայնության հետ կապերի բաժնի, ՀՀ ԿԵ ՍԱՏՄ, ԵՊԲՀ և այլ շահագրգիռ կառույցների ՏԿՀ աշխատանքների կարևոր բաղկացուցիչը: Պետք է նախատեսվեն թիրախային հաղորդակցական աշխատանքներ, նպատակ ունենալով հատկապես լրացնել համապատասխան գիտելիքների պակասը և պարզաբանել չորացված աղի պահանջարկը խրախուսող թյուրընկալումները վաճառողների և պատրաստի սննդամթերք արտադրողների շրջանում (այս փուլում, նպատակահարմար է, որպեսզի ՀՎԿԱԿ-ը և ՍԱՏՄ-ը մշակեն հուշաթերթիկ կամ պլակատ փոերի համար, ներկայացնելով “Աղը հնարավորինս քիչ, բայց միայն յոդացված” սկզբունքը):

## Գրականություն

Commonwealth of Independent States. Agreement on the prevention of iodine deficiency disorders in CIS member states. Signed by the Prime Ministers of Azerbaijan, Armenia, Belarus, Georgia, Kazakhstan, Kyrgyzstan, Moldova, Russian Federation, Tajikistan, Uzbekistan, and Ukraine, 31 May 2001. Minsk: CIS Secretariat, 2001.

F. van der Haar, G.Gerasimov, V.Q.Tyler, A.Timmer. Universal salt iodization in the Central and Eastern Europe, Commonwealth of Independent States (CEE/CIS) Region during the decade 2000–09: Experiences, achievements, and lessons learned. *Food and Nutrition Bulletin*, vol. 32, no. 4 (supplement), December 2011, 124 pages.

Gerasimov G. Report on results of a national representative survey of iodine nutrition and implementation of universal salt iodization program in Armenia (in Armenian). UNICEF, 2005. Ministry of Health of Armenia, 2005, Yerevan, 16 pages.

Gerasimov G. Increasing iodine intakes in populations through the use of iodized salt in bread baking. IDD Newsletter, August 2009, pages 9-12.

Gerasimov G.A., van der Haar F., Lazarus J.H. Overview of Iodine Deficiency Prevention Strategies in the South-Eastern Europe and Central Asia Region:2009-2016. Clinical and experimental thyroidology. 2017; 13 (4), p. 4-10. Doi:10.14341/ket9531

Ohlhorst S.D., Slavin M., Bhide J. M., Bugusu B. Use of Iodized Salt in Processed Foods in Select Countries around the World and the Role of Food Processors. Comprehensive Reviews in Food Science and Food Safety, Vol.11, 2012, page 233-284. DOI: 10.1111/j.1541-4337.2011.00182.x)

Salt situation analyses conducted in 13 countries of the CEE/CIS and the Baltic's region. In: Regional Salt Producers' Meeting for Central-Eastern Europe, Commonwealth of Independent States, and Baltic States, 29 September–1 October 1999, held in Kiev, Ukraine. Atlanta, Ga, USA: Program against Micronutrient Malnutrition, 1999:1–54.

WHO. Guideline: fortification of food-grade salt with iodine for the prevention and control of iodine deficiency disorders. Geneva: World Health Organization; 2014.

WHO. Goitre as a determinant of the prevalence and severity of iodine deficiency disorders in populations. Vitamin and Mineral Nutrition Information System. Geneva: World Health Organization; 2014.

Hutchings N., Gerasimov G. Salt iodization in Armenia: A model of sustained success. By sustaining universal salt iodization (USI), Armenia has remained iodine sufficient for over a decade, effectively protecting newborns against brain damage and loss of I.Q. points. IDD NEWSLETTER, NOVEMBER, 2017, 45 (4), p. 2-3; [https://www.ign.org/newsletter/idd\\_nov17\\_armenia\\_alternative.pdf](https://www.ign.org/newsletter/idd_nov17_armenia_alternative.pdf)

Aghajanova E.M. The problem of iodine intake in Armenia (National Survey in Armenia). Regional Iodine Monitoring workshop, Tbilisi, Feb. 20th, 2018; Presentations: [https://drive.google.com/drive/folders/1o9mCxrSkixN33\\_4N95KecuapPPXluVW](https://drive.google.com/drive/folders/1o9mCxrSkixN33_4N95KecuapPPXluVW)

WHO, UNICEF, ICC/IDD. Assessment of iodine deficiency disorders and monitoring their elimination: a guide for programme managers, 3rd edition. Geneva: WHO; 2007 ([http://whqlibdoc.who.int/publications/2007/9789241595827\\_eng.pdf](http://whqlibdoc.who.int/publications/2007/9789241595827_eng.pdf)).

WHO.2016. “ARMENIA STEPS Survey, 2016-2017. Fact Sheet”  
[https://www.who.int/ncds/surveillance/steps/Armenia\\_2016\\_STEPS\\_FS.pdf](https://www.who.int/ncds/surveillance/steps/Armenia_2016_STEPS_FS.pdf)

**ՅԱԽ վերացման ազգային ծրագրի բաղադրիչների իրականացման կարգավիճակի գնահատման նախագծի ակնկալվող արդյունքները և ժամկետները**

**Ակնկալվող արդյունքները**

Հաշվետվություն և առաջարկությունների նախագիծ, ներառյալ՝

- Տեղեկատվություն ընթացիկ իրավակարգավորման շրջանակների վերաբերյալ, ներառյալ առաջարկություններ բազմաոլորտային համակարգման մեխանիզմի մշակման/ամրապնդման և ՅԱԽ վերացման բազմամասնագիտական խմբի կամ հանձնաժողովի ձևավորման վերաբերյալ:
- Առաջարկություններ ԱԱՊ հաստատությունների մակարդակում տվյալների հավաքման և հաշվետվությունների բարելավման (ՅԱԽ հիվանդացության ու տարածվածության ցուցանիշների համար, ընդգրկելով 2017-2018 թվականների վիճակագրությունը), ինչպես նաև ՅԱԽ մշտադիտարկման պոտենցիալի ամրապնդման, այդ թվում, ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի նորաստեղծ Ազգային ռեֆերենս լաբորատորիայում ՄՅ հետազոտությունների իրականացման վերաբերյալ:
- Տեղեկատվություն տեղական արտադրության և ներկրվող կերակրի աղի մատակարարումների վերաբերյալ (ներառյալ չողացված աղի մատակարարման սողանցքների պարզաբանումը), և առաջարկություններ տեխնիկական աղի արտահոսքը սննդամթերքի շուկա կանխելու համար:
- Առաջարկություններ բուժաշխատողների և, ընդհանուր առմամբ, բնակչության համար տեղեկատվական, կրթական և հաղորդակցական նյութերի մշակման վերաբերյալ, անդրադառնալով հատկապես բոլոր այն թյուրընկալումներին, որոնք նպաստում են չողավորված կերակրի աղի պահանջարկի ձևավորմանը:



**Նախագծի Ժամկետները**

**01 հուլիսի 2017թ. – 30 նոյեմբերի 2017թ.**

**Հավելված 2**

**Հայաստանում յոդացված կերակրի աղի արտադրության և ներկրման ծավալները 2013-2018 թ.թ. ընթացքում**

Աղի աղբյուրն ու տեսակը	Արտադրության/մատակարարման ծավալները (տոննա) ըստ տարիների					
	2013թ.	2014թ.	2015թ.	2016թ.	2017թ.	2018թ.
<b>Երկրում արտադրվող ԱԱԿ աղ, ընդամենը՝</b>	<b>30786</b>	<b>29792</b>	<b>27392</b>	<b>32249</b>	<b>32550</b>	<b>22583</b>
<b>A1. «Էքստրա» յոդացված, այդ թվում՝</b>	<b>14347</b>	<b>15389</b>	<b>14372</b>	<b>14821</b>	<b>14799</b>	<b>12415</b>
- փաթեթավորված, 1 կգ աղյուսաձև պոլիպրոպիլենային փաթեթներով;	12092	12735	11953	11786	11982	9885
- պարկավորված 25 կգ քաշով պոլիէթիլենային պարկերով;	2255	2654	2419	3035	2817	2530
<b>A2. «Էքստրա» չյոդացված, արտադրական կարիքների համար (25 կգ պ.է. պարկ);</b>	-	67,2	90,6	131,3	144,4	203,6
<b>A3. II տեսակի քարաղ աղացած, N2 աղացվածքի, յոդացված, 0,9 կգ պոլիպրոպիլենային փաթեթներով:</b>	295	294	306	303	252	199
<b>A4. II տեսակի քարաղ աղացած, N2 աղացվածքի, չյոդացված, արտադրական կարիքների համար:</b>	-	-	-	76	93	125
<b>B. “Տեխնիկական” N3 աղացվածքի (արդյունաբեր. մեջ, ճանապարհների մերկասառույցի հալեցման, կաթսաների գոիչների վերականգման համար և այլն):</b>	9786	7227	6602	11394	12358	5963
<b>C. Կերային քարաղ (օգտագործվում է անասնապահության մեջ), այդ թվում՝ ընտրովի քարաղ</b>	6358	6815	6021	5524	4905	3677
	5905	6375	5606	5211	4634	3576
<b>D.Ներկրվող յոդացված աղ (փակագծերում՝ չյոդացվածաղ)</b>	2638 (n/a)	1952 (n/a)	3021 (0)	2771 (90տ. 89905կգ)	2732	4433
<b>E. Արտադրվող և ներկրվող յոդացված աղի ծավալների հանրագումարը (A1 + A3+ D )</b>	<b>17280</b>	<b>17635</b>	<b>17699</b>	<b>17895</b>	<b>17783</b>	<b>17047</b>

Հավելված 3

Մանրածախ առևտրի խանութների միջոցով բնակչությանը մատակարարվող կերակրի աղի տեսակները

h/h	Խանութի տեսակը և անունը	Մարզ, քաղաք, շրջան, գյուղ, հասցե	Կերակրի աղ (յոդացված կամ չյոդացված, աղացվածքը, փաթեթը)	Մատակարար
1.	Ա/ձ “Մանվել Միսիթարյան”	5, Բակունց փ., Երևան Արաբկիր	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, 1 կգ , աղացվածք N 2	Ավանի աղի կոմբինատ ԱԱԿ, նույնը
2.	Ա/ձ Գեղամ Աբելյան	6, Արցախի փ., Երևան, Շենգավիթ	Յոդացված, “Մպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ պոլիէթիլենի տոպրակ; Չյոդացված քարաղ, 0,9 և 25 կգ փաթեթներ	C/Z Salt Co, Իրան, ներմուծող DAAAR ՍՊԸ. 150/20, Տիչինայի փ., Երևան Ա/ձ Ս.Բայունց (Ավան, 20/3 Աճառյան փ., 26)
3.	Ա/ձ Սուսաննա Պողոսյան	Կոտայքի մարզ, գ. Նոր-Գեղի, “Խաչմերուկ”	Յոդացված, “Էքստրա” Չյոդացված քարաղ, խոշոր, 0,7 կգ ստվ. տուփ	ԱԱԿ; Ա/ձ “Ռուդիկ Գասպարյան” (1/15 Գայի , ք. Նոր-Հաջն)
4.	Ա/ձ “Անգին Լալայան”	5, գ.Արզնի, Կոտայքի մարզ	Չյոդացված քարաղ, 0,9 կգ ստվարաթղթ. տուփ	Ա/ձ “Գ.Շամիրյան”, 1Ա/8 Ռուբինյանց փ., Երևան
5.	Սուպերմարկետ “Հաջն”	6, Թորոսյան փ., ք. Նոր-Հաջն, Կոտայքի մարզ	Յոդացված, “Էքստրա” Յոդացված, “Մպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ պոլիէթիլենի տոպրակ; Չյոդացված քարաղ, 0,9 կգ փաթեթ	ԱԱԿ; C/Z Salt Co, Iran, ներկրող DAAAR ՍՊԸ. 150/20, Տիչինայի փ., Երևան Ա/ձ “Գ.Շամիրյան”, 1Ա/8 Ռուբինյանց փ., Երևան
6.	“ER FOOD” ՍՊԸ, պարենային ուպերմարկետ “Բակալեա”	62, Հանրապետության փ. , Երևան, Կենտրոն	Յոդացված, “Էքստրա” Յոդացված, “Մպիտակ ոսկի” քարաղ, N 1; 1 կգ պոլիէթիլենի տոպրակ; Չյոդացված քարաղ, N2, 0,9 կգ փաթեթ	ԱԱԿ C/Z Salt Co, Իրան, ներկրող DAAAR ՍՊԸ, 150/20, Տիչինայի փ., Երևան “Ա.Սահակյան”, 6 Լեպսիուս փ., շ.11, բն. 22, Երևան
7.	Սուպերմարկետ (սննդամթերք և այլ ապրանքներ)	8բ, 101, Արցախի փ., str., Երևան, Շենգավիթ	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, աղացվածք N 2; 0,9 կգ, Յոդացված քարաղ, աղացվածք N 1; 1 կգ	ԱԱԿ; Նույնը “Արտեմսոլ”, Ուկրաինա , ք.Սոլեդար, ներկրող: “ՕԳԱ-ԲՐԻՉ”, Երևան, 14, Արին-Բերդ

8.	Խանութ “Կամրջի տակ”	գ.Փարաքար, Արմավիրի մարզ	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, աղացվածք N 2; 0,9 կգ, Յոդացված (հայերենով) աղ “Իլեցկայա”, պահա- ծոյացման համար, 1 կգ	ԱԱԿ; նույնը; <b>“Ռուստլ” ՍՊԸ, Օրենբուրգ ք. Սոլ-Իլեցկ</b>
9.	Ա/ձ Վիկտորիա Ղարիբյան	1Ա, Վ. Կոստանյան փ. Վաղարշապատ, Արմավիրի մարզ	Յոդացված, “Էքստրա” Չյոդացված քարաղ, N2, 0,9 կգ փաթեթ	ԱԱԿ; Ա/ձ “Գ.Շամիրյան”, 1Ա/8 Ռուբինյանց փ., Երևան
10.	Ա/ձ Հովիկ Պողոսյան	36 Աճառյան փ., Երևան, Ավան	Յոդացված, “Էքստրա” Յոդացված, “Սպիտակ նսկի” քարաղ, N 1; 1 կգ Յոդացված քարաղ, N 1; 1 կգ	ԱԱԿ; C/Z Salt Co, Իրան, ներկրողը չի նշված “Արտեմսոլ”, Ուկր, Սոլեդար, Ն/մ. Ալեքս Սթար ՍՊԸ Տավուշ
11.	Ա/ձ Վաչագան Պետրոսյան	Հանրապետության փ. 58, Երևան, Կենտրոն	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, N 1; 1 կգ	ԱԱԿ; “Արտեմսոլ”, Ուկր, ք.Սոլեդար, ներկրող “ՕԳԱ-ԲՐԻՉ”
12.	“Երևան Սիթի”, սուպերմար- կետների ցանց	10, Տիգրան Մեծ փ. Երևան, Կենտրոն	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, N 2; 0,9 կգ, Յոդացված, “Սպիտակ նսկի” քարաղ, N 1; 1 կգ; Յոդացված քարաղ, N 1; 1 կգ	ԱԱԿ; նույնը;  C/Z Salt Co, Իրան  “Արտեմսոլ”, Ուկրահինա, ք.Սոլեդար
13.	Ա/ձ Հրաչյա Հարությունյան, մթերային խա- նութ “Փեթակ” տոնավաճառում	17ա, Արշակունյաց պողոտա, Երևան	Յոդացված, “Սպիտակ նսկի” քարաղ, N 1, 1 կգ  Յոդացված (հայերենով) աղ <b>“Իլեցկայա”</b> , պահա- ծոյացման համար, 1 կգ	C/Z Salt Co, Իրան, ներկրող DAAAR ՍՊԸ. 150/20, Տիչինայի փ., Երևան “Ռուստլ” ՍՊԸ, Օրենբուրգ ք. Սոլ-Իլեցկ, փաթեթավոր. “Պաշար Գրուպ”
14.	Ա/ձ Անահիտ Ապրեսյան, մթերային խա- նութ Սուրմալու տոնավաճառում	15, Արշակունյաց պողոտա, Երևան , Կենտրոն համայնք	Յոդացված, “Սպիտակ նսկի” քարաղ, N 1, 1 կգ <b>Յոդացված (հայերենով)</b> աղ “Իլեցկայա”, պահա- ծոյացման համար, 1 կգ	C/Z Salt Co, Իրան, ներկրող DAAAR ՍՊԸ. 150/20, Տիչինայի փ., Երևան “Ռուստլ” ՍՊԸ, Օրենբուրգ ք. Սոլ-Իլեցկ, փաթեթավոր. “Պաշար Գրուպ”
15.	Ֆիրմային խանութ “Մուշ”	118, Տպագրիչների փ., Երևան (Կենտրոն համայնք)	Յոդացված, “Էքստրա” <b>Յոդացված (հայ.)</b> աղ “Իլեցկայա”, պահ. ; 1 կգ  Չյոդացված քարաղ, N 2, ստվարաթղթե տուփ, 0,75 կգ	ԱԱԿ; “Ռուստլ” ՍՊԸ ք. Սոլ-Իլեցկ, փաթեթավորող “Համով” ՍՊԸ Ա/ձ “Ա.Սահակյան”, 6 Լեպպիուս փ., 2.11, բն. 22 Երևան
16.	“Նոր Զովք”, սուպերմար- կետների ցանց	52/140 Բաբաջանյան փ., Երևան (Հարավ-	Յոդացված, “Էքստրա” Չյոդացված քարաղ, 0,9 կգ	ԱԱԿ; ԱՁ “Գ.Շամիրյան”, 1Ա/8 Ռուբինյանց փ., Երևան;

		Արևմտյան զանգված)	Չյոդացված քարաղ, “Կանաչ ֆերմա”, մանր, 04 կգ Ծովային աղ, զանազան	Արտադր. “Բրոկոլի” սպր, 9/ս Քոչինյան փ., Երևան;  Արտադր./փաթեթ. ՌԴ-ում
17.	“Լիլ Գրիգ” ՍՊԸ Մթերային խանութ	Ֆուչիկի փ., Երևան (Աջափնյակ համայնք)	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, N 1; 1 կգ	ԱԱԿ; “Արտեմսոլ”, Ուկր, ք.Սոլեդար, ներկրող՝ “ՕԳԱ-ԲՐԻՉ”, 14, Արին-Բերդ փ., Երևան
18.	“Կայգեր” սուպերմարկետ	23/6 Մարգարյան փ., Երևան (Աջափնյակ համայնք)	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, աղացվածքը N 2; 0,9 կգ; Յոդացված “Սպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ (պոլիմեր., և թղթե) և 0,5 (պլաստմաս.) 2 տեսակի ծովային աղ նատրիումի յոդիդով՝ <b>10 մգ/կգ խտությամբ:</b>	ԱԱԿ; նույնը;  Բոլորը՝ C/Z Salt Co, Իրան, ներկրող՝ DAAAR ՍՊԸ, 150/20, Տիչինայի փ., Երևան;  Արտահանող երկիրը՝ Իսպանիա
19.	“Մինի մարկետ” ՍՊԸ	16, Մարգարյան փ., Երևան (Աջափնյակ համայնք)	Յոդացված, “Էքստրա”, 1կգ Յոդացված քարաղ, 0,9 կգ, N 2; Չյոդացված քարաղ, N 2, 0,75 կգ փաթեթ	ԱԱԿ;  նույնը; Ա/ձ “Ա.Սահակյան”, 6 Լեպսիուս փ., շ.11, բն. 22 Երևան
20.	“Հատիկ” մթերային խանութ	4, Սաֆարյան փ., Երևան (Նոր-Նորք համայնք)	Յոդացված, “Էքստրա” Յոդացված քարաղ, 25 կգ պարկ; Յոդացված աղ “Իլեցկայա” Չյոդացված քարաղ, միջին, 0,7 կգ Չյոդացված քարաղ, 0,9 կգ	ԱԱԿ; Արտադրված է Իրանում;  Արտադրողը՝ “Ռուսսոլ” ՍՊԸ, ք. Սոլ-Իլեցկ Ա/ձ “Ս.Բայունց”, Ավան, 20/3 Աճառյան փ., բն. 26 Ա/ձ “Ա.Գրիգորյան”, 313/12 միկրոշրջան, ք.Հրազդան
21.	ԱՁ Տիգրան Վարդանյան	34, Աճառյան փ., Երևան, Ավան	Յոդացված, “Էքստրա”, Չյոդացված քարաղ, 0,7 կգ, ստվարաթղթե տուփ, Չյոդացված քարաղ, 0,8 կգ, ստվարաթղթե տուփ;	ԱԱԿ; ԱՁ “Ս.Բայունց” (Ավան, 20/3 Աճառյան փ.,26) Արտադրողն ու փաթեթա- վորողը նշված չեն
22.	ԱՁ Սուսաննա Գիւնոյան	30, Աճառյան փ., Երևան (Ավան)	Յոդացված, “Էքստրա” Չյոդացված քարաղ, 0,9 կգ, ստվարաթղթե տուփ	ԱԱԿ; ԱՁ “Ս.Բայունց” (Ավան, 20/3 Աճառյան փ., 26), Երևան
23.	Ա/ձ Հասմիկ Ղալֆաջյան	62, Հանրապետության	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ	ԱԱԿ;  նույնը

		փ., Երևան (Կենտրոն)	Յոդացված քարաղ, N 2 0,9 կգ, պոլիէթիլեն փաթ.	
24.	“Նոր Նորք” սուպերմարկետ	8/2 Գայի պողոտա Երևան, Նոր Նորք համայնք	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված քարաղ, N 2 0,9 կգ Յոդացված, “Սպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ Յոդացված քարաղ, N 1, 1 կգ Չյոդացված քարաղ, 0,9 կգ, ստվ.թղթե տուփ	ԱԱԿ; նույնը; C/Z Salt Co, Իրան, ներկրող DAAAR ՍՊԸ; “Արտեմսոլ”, Ուկր. , Սոլեդար, ներկրող՝ “ՕԳԱ-ԲՐԻՋ”, ԱԶ “Գ.Շամիրյան”, 1Ա/8 Ռուբինյանց փ., Երևան
25.	“ՄԱՍ” սուպերմարկետ	21, Քաջազնունի փ., Երևան (Կենտրոն)	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված քարաղ, N 2 0,9 կգ, պոլիէթիլեն փաթ. Յոդացված քարաղ, N 1, 1 կգ Յոդացված (15-20 մգ/կգ), Ալպիական աղ, պոլիէթիլեն փաթ., 1 կգ	ԱԱԿ; նույնը; “Արտեմսոլ”, Ուկր. , Դոնեցկ Արտադր. Kotani GmbH, Ավստրիա, ներմուծող՝ ՕՕՕ Kotani, ՌԴ
26.	ԱԶ Արտակ Մկրտչյան	76/5, Հանրապետության փ., Երևան (Կենտրոն)	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված (հայերեն) աղ “Իլեցկայա”, պահածոյացման համար, 1 կգ Չյոդացված քարաղ, ստվարաթղթե տուփ	ԱԱԿ; “Ռուսսոլ” ՍՊԸ, Օրենբուրգ ք. Սոլ-Իլեցկ; ԱԶ Արմեն Հակոբյան
27.	ԱԶ Արթուր Գալստյան	27/111 Մամիկոնյանց փ., Երևան (Արաբկիր)	Յոդացված, “Էքստրա” 1 կգ Յոդացված, “Սպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ Յոդացված, “Սպիտակ ոսկի” ռաֆինացված	ԱԱԿ; C/Z Salt Co, Իրան, DAAAR ՍՊԸ, 150/20, Տիշինայի փ.; Նույնը;
28.	Սուպերմարկետ “Կառուսել”	21, Մամիկոնյանց փ., Երևան, Արաբկիր	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված “Իլեցկայա”, պահածոյացման համար, 1 կգ, ստվ.թղթե տուփ Չյոդացված քարաղ, N 2, 0,75 կգ փաթեթ	ԱԱԿ; Ռուսսոլ ՍՊԸ, Օրենբուրգ, ք. Սոլ-Իլեցկ; ԱԶ “Ա.Սահակյան”, 6 Լեպսիուս փ., շ.11, բն. 22 ;
29.	“Նոր Տուն” սուպերմարկետ	25/1, Մամիկոնյանց փ., Երևան, Արաբկիր	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված քարաղ, N 1., 1 կգ;	ԱԱԿ; “ԱՐՏԵՄՍՈՒԼ”, Ուկրաինա, Դոնեցկ

			Չյոդացված քարաղ, 0,6-0,7 կգ տոպրակներ, առանց պիտակների	Աղի աղբյուրը չի պարզվել, աղը փաթեթավորվում է խանութում
30.	“Երևան Սիթի” Սուպերմարկետների ցանց	60/2, Կոմիտաս պողոտա, Երևան, Արաբկիր	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված քարաղ, 0,9 կգ; պոլիէթ. փաթեթ.; Յոդացված, “Սպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ; Յոդացված, “Սպիտակ ոսկի” ռաֆինացված; Յոդացված քարաղ, N 1, 1 կգ; Ծովային աղ	ԱԱԿ; ԱԱԿ; C/Z Salt Co, Իրան, DAAAR ՍՊԸ Նույնը; “ԱՐՏԵՄՍՈՒ”, Ուկրաինա, Դոնեցկ Արտահանված՝ Իսպանիայից
31.	ԱԶ Սուսաննա Հարությունյան	12/24 Կիկյան փ., Երևան	Յոդացված, “Էքստրա”, 1 կգ Յոդացված, “Սպիտակ ոսկի” քարաղ, N 1, 1 կգ; Չյոդացված քարաղ, N 2, 0,75 փաթեթ	ԱԱԿ; C/Z Salt Co, Իրան, ներկրող՝ DAAAR ՍՊԸ ԱԶ “Ա.Սահակյան”, 6 Լեպսիուս փ., շ.11, բն. 22, Երևան
32.	“Սպիտակ Տուն ՏԱՍ” ՍՊԸ	56/45, Մամիկոնյանց փ., Երևան, Արաբկիր	Յոդացված, “Էքստրա”, պոլիէթիլենային տոպրակով, 1 կգ	ԱԱԿ

Ընդամենը՝ 32 խանութ;

աղի նմուշներ՝ 93:

Հայաստանի տնային տնտեսություններում օգտագործվող կերակրի աղում յոդի պարունակության մշտադիտարկյան արդյունքները, 2009-2018թ.թ.

***Բոլոր տվյալները տրամադրվում են ՀՀ ԱՆ ՀՎԿԱԿ-ի կողմից:***

*(2017-2018 թվականների տվյալները ներկայացվում են առաջին անգամ; հաշվետվության բնագրում, այսինքն 2017 թվականին հանձնված անգլերեն տարբերակում դրանք չեն եղել)*

h/h	Տարի	Նմուշների ընդհանուր քանակը (ըստ տարիների)	Ազգային ստանդարտին* չհամապատասխանող նմուշների քանակը
1.	2009	8073	10
2.	2010	6154	4
3.	2011	6107	2
4.	2012	12025	3
5.	2013	20777	3
6.	2014	14816	0
7.	2015	16449	0
8.	2016	13553	0
9.	2017	7659	0
10.	2018	3807	39

\* այսինքն՝ 40±15 մգ/կգ սահմաններից դուրս:

**Հարցաթերթ**

Պատրաստի սննդամթերքում յոդացված կերակրի աղի օգտագործման չափի և յոդային սնուցման վերաբերյալ այդ մթերքները պատրաստող անձանց գիտելիքների մակարդակի գնահատման համար

*Այս հետազոտությունն անկացվում է բոլորիս առողջությունը պաշտպանելու նպատակով: Ձեր փորձառությունը որպես սնունդ արտադրող չափազանց արժեքավոր է և մենք խնդրում ենք Ձեր օգնությունը՝ ստորև շարադրված հակիրճ հարցաթերթը լրացնելու համար (իհարկե, եթե համաձայն եք մասնակցել հարցազրույցին): Խնդրում ենք նկատի ունենալ, որ Ձեր կողմից մեզ տրամադրված ինֆորմացիան կընդհանրացվի սնունդ արտադրող այլ անձանց պատասխանների ամբողջության մեջ, իսկ Ձեր անունը չի ասոցացվի կոնկրետ ինֆորմացիայի հետ: Որոշ հարցերի համար ներկայացված են պատասխանների տարբերակներ, որոնցից կարելի է ընտրել մեկ կամ մեկից ավելի պատասխան:*

No: \_\_\_\_\_ ամսաթիվ \_\_\_\_\_

1. Խնդրում ենք նշել (✓-ով) աղ պարունակող այն սննդամթերքը, որը պատրաստվում է Ձեր կողմից՝  
Հաց \_\_\_\_\_ պանիր \_\_\_\_\_ թթու \_\_\_\_\_ (այլ) \_\_\_\_\_:
2. Խնդրում ենք նշել, թե արդյո՞ք տվյալ սննդամթերքը հաճախակի է օգտագործվում (ամեն օր կամ համարյա ամեն օր) Ձեր ընտանիքում, ներառյալ Ձեր ամենամոտ հարազատների կողմից՝  
Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_:
3. Խնդրում ենք նշել, արդյո՞ք տվյալ սննդամթերքը վաճառվում է այլ անձանց՝  
Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_;  
Եթե “այո”, ապա նշեք վաճառքի միջին տարեկան ծավալը \_\_\_\_\_:
4. Դուք գնում/օգտագործում եք յոդացված՞ աղ նշված սննդամթերքը պատրաստելու համար՝  
Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_ Վստահ չեմ (վստահորեն չեմ կարող ասել) \_\_\_\_\_:  
Եթե “այո”, ապա խնդրում ենք նշել հիմնական պատճառը (ներքև)。
  - a. Օգտակար է առողջության համար \_\_\_\_\_,
  - b. Մովորաբար այս տեսակն է միշտ առկա \_\_\_\_\_,
  - c. Բ ժշկի խորհրդով \_\_\_\_\_
  - d. Այլ պատճառ \_\_\_\_\_
5. Դուք գնում/օգտագործում եք չյոդացված՞ աղ նշված սննդամթերքը պատրաստելու համար.



Այն \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_ Վստահ չեմ (վստահորեն չեմ կարող ասել) \_\_\_\_\_;

(Հարցազրուցավարի համար: Եթե Հ5-Այո, տվեք Հ6-ը, եթե Ոչ՝ Հ6-ը բաց թողեք):

6. Խնդրում ենք բացատրել, թե ինչու նշված մթերքում յոդացված աղ չի օգտագործվում.

a. Այն ազդում է համի, տեսքի/կառուցվածքի կամ այլ հատկության վրա \_\_\_\_\_,

b. Այն ավելի թանկ է \_\_\_\_\_,

c. Վստահ չեմ (չգիտեմ ինչու է այն անհրաժեշտ) \_\_\_\_\_,

d. Այլ \_\_\_\_\_:

7. Մարդու մարմնում յոդը որ<sup>օ</sup> օրգան-համակարգի պատշաճ գործունեության համար է անհրաժեշտ.

a. երիկամներ \_\_\_\_\_,

b. վահանաձև գեղձ \_\_\_\_\_,

c. ենթաստամոքսային գեղձ \_\_\_\_\_,

d. այլ \_\_\_\_\_,

e. վստահ չեմ \_\_\_\_\_:

8. Երբևէ լսել<sup>օ</sup> եք մարդու օրգանիզմում յոդային անբավարարության ազդեցության/հետևանքների մասին.

Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_:

9. Դուք երբևէ լսել կամ տեսել<sup>օ</sup> եք որևէ տեղեկատվություն Հայաստանում յոդային անբավարարության կանխարգելման և այդ նպատակով աղի յոդացման անհրաժեշտության ու կարևորության մասին.

Այո \_\_\_\_\_ Ոչ \_\_\_\_\_:

(Հարցազրուցավարի համար: Եթե Հ9-Այո, տվեք Հ10-ը և Հ11-ը , եթե Ոչ՝ Հ12-ին):

10. Դուք որտեղից<sup>օ</sup> եք ստացել յոդային անբավարարությանը և դրա կանխարգելմանը վերաբերող տեղեկատվությունը.

a. տպագիր մամուլ \_\_\_\_\_ ,

b. հեռուստատեսություն \_\_\_\_\_,

c. բուժաշխատող \_\_\_\_\_,

d. բարեկամներ/ընկերներ \_\_\_\_\_,

e. այլ \_\_\_\_\_:

11. Վերջին անգամ երբ<sup>օ</sup> եք լսել կամ կարդացել աղի յոդացման անհրաժեշտության ու կարևորության մասին.

a. վերջին ամսվա ընթացքում \_\_\_\_\_,

b. վերջին տարվա ընթացքում \_\_\_\_\_,

c. մի քանի տարի առաջ \_\_\_\_\_:

12. Դուք սովորաբար որտեղից<sup>օ</sup> եք աղ գնում.

Յոդացվածը՝ Խանութից \_\_\_\_\_ Այլ տեղից \_\_\_\_\_,

Չյոդացվածը՝ Խանութից \_\_\_\_\_ Արտադրամասից \_\_\_\_\_ Այլ տեղից \_\_\_\_\_:

Մեկ անձնական հարց ունեմ (եթե, իհարկե, համաձայն եք Ձեր անձնական տվյալները քննարկել ինձ հետ).

13. Ձեր տարիքը \_\_\_\_\_ Կրթությունը \_\_\_\_\_:

Հարցազրուցավար \_\_\_\_\_;

Մարզ \_\_\_\_\_ Բնակավայր \_\_\_\_\_ (քաղաքային, գյուղական);

Մտնող պատրաստող հաստատություն/անձ \_\_\_\_\_:

**ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԱՌԱՋԱԴՐԱՆՔ**

Շահագրգիռ կողմերին՝ Հայաստանում ԱՀՅ ռազմավարության իրականացումը մշտադիտարկելու և վերահսկելու համար

- **Առողջապահության նախարարություն:**
  - Տրամադրել տվյալներ տնային տնտեսությունների մակարդակում կերակրի աղի կանոնավոր մշտադիտարկման վերաբերյալ և ապահովել տվյալների վերլուծություն (ներկայացնելով տեղեկատվություն հետազոտությունների աշխարհագրության, աղի աղբյուրի և տեսակի վերաբերյալ);
  - Որոշել հաղորդակցման միջոցառումների կարիքները և իրականացնել ՏԿՀ աշխատանքներ՝ ԱՀՅ ռազմավարության առաջընթացի և ՅԱԽ կայուն էլիմինացիայի (վերացման) ապահովման համար;
  - Աջակցել Բազմամասնագիտական աշխատանքային խմբին (ԲԱԽ), համակարգել խմբի միջոցառումները, նպատակ ունենալով շահագրգիռ կողմերի հետ համատեղ ղեկավարել և գնահատել ՅԱԽ վերացման ծրագրի և ԱՀՅ առաջընթացը (գումարել եռամսյակային և տարեկան ժողովներ);
- **ՀՀ կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմին՝ ՄՍՍՄ (մինչ 2019թ.-ՀՀ գյուղատնտեսության նախարարության ՄԱՊԾ)**
  - Տրամադրել տվյալներ մանրածախ առևտրի և սննդի արդյունաբերության մակարդակներում կերակրի աղի կանոնավոր մշտադիտարկման վերաբերյալ և ապահովել տվյալների վերլուծություն (ներկայացնելով տեղեկատվություն հետազոտությունների աշխարհագրության, աղի աղբյուրի և տեսակի վերաբերյալ);
  - Ապահովել աջակցություն և մասնակցել աղի առևտրով զբաղվողների և սնունդ արտադրողների համար իրականացվող նպատակային հաղորդակցման աշխատանքներին;
- **ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<sup>4</sup>**
  - Տրամադրել տվյալներ կերակրի աղի ներմուծման վերաբերյալ;
- **Երևանի պետական բժշկական համալսարան (գլխավոր ներգատաբաններ):**
  - Մասնակցել ՅԱԽ վերացման ծրագրի նվաճումների և կարիքների համատեղ գնահատման միջոցառումներին (ներառյալ, ՅԱԽ տարածվածության և վահանաձև գեղձի հիվանդությունների բեռի վերլուծության, ախտորոշման և բուժման ուղեցույցների մշակման, հաշվետվության ձևերի վերանայման,

<sup>4</sup> - ՀՀ էկոնոմիկայի նախարարությունը կազմավորվել է ՀՀ տնտեսական զարգացման և ներդրումների նախարարության և ՀՀ գյուղատնտեսության նախարարության միավորման արդյունքում՝ 2019թ. մայիսի 8-ին:

մասնագիտական ուսուցման/վերապատրաստման կարիքների որոշման և համապատասխան դասընթացների անցկացման աշխատանքները);

- **Ավանի աղի կոմբինատ (ԱԱԿ):**

- Տրամադրել տվյալներ Հայաստանում կերակրի աղի արտադրման և մատակարարման վերաբերյալ և մասնակցել երկրում աղի մատակարարման ընդհանուր իրավիճակի գնահատման աշխատանքին;

- **Աղի առևտրով զբաղվողների և սնունդ արտադրողների ասոցիացիաներ, լրատվամիջոցներ և սպառողական ՀԿ-ներ՝**

- Մասնակցել Բազմամասնագիտական աշխատանքային խմբի (ԲԱԽ) հանդիպումներին՝ ծրագրի իրականացման ընթացքում ծագող և փոխադարձ հետաքրքրություն ներկայացնող տեղեկատվության քննարկման համար, աջակցել հաղորդակցման ամրապնդմանն ուղղված գործողությունների կազմակերպմանը և մասնակցել տեղեկատվական նյութերի տարածմանը: